

ሀላግ ግንባር

ጥራት

مارزق

مجلة رياضية شهيرة
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

337- SUጥኮ, 2014, ጥኮኮ 4 (382) - VOL. XXXIII N° 4

السنة الثالثة والثلاثون - العدد رقم 4



ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ «ԷՏՈՒԱՐՏՕ ՍԷՖԵՐԵԱՆ» ԱԿՈՒՄԲ

Թղթակից
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Երեքշաբթի, 8 Յուլիսի կեսօրին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեց Պուենոս Այրեսի «Էտուարտո Սեֆերեան» ակումբ, ուր արժանացավ ժողովրդային ջերմ ընդունելության:

Ակումբի մուտքին նախագահը ընդունուեցավ աւանդական աղ ու հացի հիւրասիրութեամբ, մինչ Հ.Մ.Ը.Մ-ի «Արարատ» սկաուտական խումբի ղեկավարները զինք պատուեցին սկաուտական փողկապով: Ներկաներու շարքին էին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մարիօ Նալպանտեան, Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի, «Արամ Մանուկեան» կոմիտէի եւ Հայ Դատի Յանձնախումբի անդամներ, ՀՕՄ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւններու անդամներ Կրասիէա Գէորգեան եւ եղբ. Գարլոս Սէֆերեան, ՀՕՄ-ի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Համագործակցութեան Եւրոպայի Վարչութիւններու եւ տեղական մասնաճիւղերու անդամներ, «Արմենիա» Երիտասարդական եւ Պատանեկան Միութիւններու անդամներ, Խրիմեան վարժարանի երկրորդական բաժնի աշակերտներ եւ ուսուցչական կազմ, ինչպէս նաեւ համակիրներ ու համայնքի կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ իր գաղափարակից կազմակերպութիւններուն՝ Հայ Օգնութեան Միութեան, Հ.Մ.Ը.Մ-ի, Համագործակցութեան, Խրիմեան վարժարանի եւ «Արմենիա» Երիտասարդական Միութեան անունով բարի գալուստ մաղթելով՝ Նախագահ Սերժ Սարգսյանին եւ նախագահական պատուիրակութեան, Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Խաչիկ Տէր Ղուկասեանը նշեց. «Այս շէնքին մէջ Հայաստանի Հանրապետութեան բոլոր նախագահները ներկայ եղած են, եւ բոլորին ըսած ենք նոյնը. պայմաններու բերումով իրերայաջորդ սերունդներ երբ հաստատուած են հայրենիքէն այսօր, այս



ափերուն վրայ, միշտ հայապահպանումը ունեցած են կիզակէտ, միշտ հայ սերունդներ կերտելը եղած է իրենց համար նպատակ: Բայց արդէն 80-ական թուականներէն ի վեր Հայ Դատի աշխատանքները, Հայոց Յեղասպանութեան ճանաչումը, քաղաքականացումը վերածուած են մեր հիմնական աշխատանքներուն:

Արդէն հոս հասակ առած է չորրորդ սերունդ մը, որ կազմուեցավ Ազատ ու Անկախ Հայրենիքի, Արցախի ազատագրական պայքարի, ձեզի նման հերոսներու նայելով եւ անոնցմէ ներշնչուելով: Մենք այսօր արդէն կ'ըսենք որ հայապահպանումը կը մնայ մեր հիմնական աշխատանքներէն»:

Խօսքին աւարտին, Խաչիկ Տէր Ղուկասեան նախագահ Սարգսյանին նուիրեց «Մենք անկեղծ զինուոր ենք» նշանաբանով ճատրակի խաղատախտակ մը:

Ապա խօսք առաւ Նախագահ Սերժ Սարգսյան եւ շնորհակալութիւն յայտնեց իրեն ի պատիւ կազմակերպուած ընդունելութեան համար: Ան նաեւ անդրադարձաւ յուշանուէրին նշանաբանին եւ ըսաւ. «Այս գրութիւնը՝ «Մենք անկեղծ զինուոր ենք», չափազանց պարտաւորեցրնող է, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը զինուոր է: Զինուոր է իր պարտականութիւններու ծիրին մէջ, զինուոր է իր պատասխանատուութեան շրջանակներուն մէջ, զինուոր է իր գաղափարին համար: Ես չափազանց ուրախ եմ, որ մեր ազգային կառոյցները, մեր ազգային կուսակցութիւնները, մեզի հպարտութիւն կը ներշնչեն եւ մենք նաեւ անով կը տարբերինք ուրիշներէն»:

Շարունակելով, նախագահը նշեց, որ մեր խնդիրն է եկող սերունդին մէջ հայկականութեան կրակը վառ պահել, մէկ կողմէ հայկական պետականութիւնը ամրապնդելով, իսկ միւս կողմէ Սփիւռքի մեր կառոյցները հզօրացնելով: «Մենք ուժեղ ենք իրարմով: Մենք միասին շատ բան կրնանք ընել: Հետզհետէ մեր ակումբները պիտի աւելնան, մեր համակիրներուն շարքերը պիտի բազմանան: Եւ ի հարկէ այս բոլորը շնորհիւ այս գաղափարին՝ մենք բոլորս զինուոր ենք եւ զինուոր ալ պիտի մնանք: Այսպէս միայն կարելի է Հայաստանը ուժեղացնել», հաստատեց ան:

Ակումբէն մեկնելէ առաջ, նախագահ Սարգսյան, իր բեւ յուշանուէր, Խաչիկ Տէր Ղուկասեանին յանձնեց Հայաստանի Հանրապետութեան կեդրոնական դրամատան կողմէ հրապարակուած արձաթեայ յրեւիճական մետաղադրամներու հաւաքածոյ մը:



ներկայ եղած են, եւ բոլորին ըսած ենք նոյնը. պայմաններու բերումով իրերայաջորդ սերունդներ երբ հաստատուած են հայրենիքէն այսօր, այս

ԱՅՍ ԹԻԻԸ

33-րդ ՏԱՐԻ, 2014, ԹԻ 4 (382)

www.Homenetmen.org



Մարզական ամսաթերթ
Հրատարակություն
Հ.Մ.Ը.Մ.ի
Կեդրոնական Վարչություն

ԽՄԲԱԳԻՐ
Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
Սեդա Պէշեան-Սաղապազարեան,
Մարո Քէշիշեան (Արեւմտեան
Մ. Նահանգներ), Յակոբ
Խաչատուրեան (Արեւելեան
Մ. Նահանգներ), Տիրան
Շահինեան (Գանատա), Ռազմիկ
Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան
Պատրիկ Կիւլպէնկեան
Արօ Մոսիկեան

ԹԵՐՆԻՔ ԱՆՉՆԱԿԱԶՄ

Էջադրում - Արշօ Պալեան
Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան
Colour Separation - Photogravure
Paklayan

Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



10

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ


- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Արձագանգ 10
- Մասնաձիղէ Մասնաձիղ 20

ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 16
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



20



26

ՀԱՍՅԷ

Պուրճ Համուտ, Նոր Մարաշ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 00961 1 248043, 260117
E-mail: marzig@homenetmen.org
P.O. Box: 80486 B. Hammoud,
Lebanon

Marzig

SPORTS MAGAZINE

ՑՐՈՒՄ-ՎԱՃԱՌՔ

Լիբանանի մէջ թերթին
ցրումը կը կատարուի
յատուկ ցրուիչով (71 239209)
վաճառքի սակն է 4000 Լ.ո.
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ձշդուած է՝ Լիբանան \$32
Միջին Արեւելեան եւ
Եւրոպական երկիրներ \$70,
Մ. Նահանգներ եւ Աւստրալիա \$75

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթը ուղղակի Լիբանանէն
կը ստացուի անձնական
բաժանորդագրութեամբ:
Լիբանանէն դուրս թերթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
եւ Շրջանային Վարչութիւնները:



Խ
Ս
Ք
Ա
Գ
Գ
Ր
Ա
Կ
Ի
Ն

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ

Ինչքան կը խօսուի կարգ ու կանոնի մասին: Ինչքան շատ ծնողներ, կրթական ու միութենական պատասխանատուներ կարգ ու կանոն կը յանձնարարեն իրենց դեռատի պատանիներուն:

Արդեօք մեր տուններուն, դպրոցներուն եւ ակումբներուն մէջ կարգ ու կանոնի կիրարկումը գոհացուցի՞չ է:

Պատճառներ ունինք թերահաւատ ըլլալու այս մասին, որովհետեւ ազգային մեր յատկանիշներէն մէկն է... կանոնաւէր եւ կանոնապահ չըլլալը:

Օրինակներ թուելու կարիքը կա՞յ:

Յիշենք միայն մեր անճշդապահ եւ անկանոն ժողովները: Յիշենք մեր անկանոն եւ թափփած աշխատանքները: Յիշենք մեր «աչքը բաց» անկանոնութիւնները խճողուած ձեռնարկներու, պսակի, նոյնիսկ թաղումի պահերուն:

Թուե՞նք նաեւ մեր անձնական թէ միութենական գործի կանոնազանցութեան մանրութները, «այսպէս ալ կ'ըլլայ, այդպէս ալ կ'ըլլայ»ի մեր «լուծումները»...

Ուժի, ժամանակի եւ նիւթականի ինչքան մսխում կը կատարուի այդ փոքր կարծուած անկանոնութիւններէն: «Ամէն բան իր տեղին ու ժամանակին» առածը կարծէք իր իմաստն ու հնչեղութիւնը կորսնցուած է այլեւս մեր ականջներուն մէջ:

Լատիներէնը եւ անկէ ծնած եւրոպական բազմաթիւ լեզուներ կարգ ու կանոն իմաստով ունին disciplina բառը: Բառին արմատը կը նշանակէ նաեւ աշակերտ: Հետեւաբար, կանոնապահութիւնը կը նրկատուի կենցաղավարական կրթութիւն մը, զոր աշակերտը կը ստանայ իր ուսու-

ցիչէն կամ պատասխանատուէն, հնազանդութեան կարգով, հետեւողականութեան ճամբով:

Կարգ ու կանոնը պատանիին ու երիտասարդին կու տայ վարժութիւնը ճանչնալու լաւն ու արդարը: Ան կը ներշնչէ ձգտումը ուրիշներուն չընելու այն՝ ինչ որ պիտի չուզէինք որ ուրիշները ընէին մեզի:

Կարգ ու կանոնը կը յղկէ մարդուն նկարագիրը: Կը կրթէ եւ կ'ազնուացնէ զայն: Կարգ ու կանոնը մարդը կը դարձնէ տէր՝ իր ժամանակին, իր ֆիզիքական, իմացական եւ նիւթական հարստութեան: Ան կը հանդիսանայ հիմնաքարը հանրային բարոյականին եւ զսպիչ սանձը՝ գայթակղեցուցիչ փորձութիւններու:

Բոլորին պարտքն է յարգանք ու սէր տաճել հանդէպ կարգ ու կանոնին, մինչեւ իսկ՝ սուկալ անկէ, որովհետեւ դժուար եւ խստապահանջ բան է կարգ ու կանոնի պարտադրանքներու հետեւիլը:

Կեանքի մէջ, մեծագոյն դժբախտութիւնները կը ծնին չափազանցութիւններէ, ծայրայեղութիւններէ եւ անկանոնութիւններէ: Դարերու փորձառութիւնը հակառակին վկայութիւնը չի տար:

Պէտք է սիրել կարգ ու կանոնը, սիրել չափաւորութիւնը:

Պէտք է յարգել կարգ ու կանոնը, յարգել այն սկզբունքներն ու իտեալները, որոնք մեզմէ աւելի երկար կեանք ունին:

Ու նաեւ՝ պէտք է գործել կարգ ու կանոնով: Օրէնք, չափ ու չափանիշ ճշդել մեր ծրագրումներուն եւ աշխատանքներուն համար, որպէսզի մեր կեանքը ըլլայ իսկական զարգացումի կեանք, տեւական բարձրացումի կեանք, տեւական գոհունակութեան եւ երջանկութեան կեանք:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

- Բ. -

Տոթթ. Շահե Ենիգոմշեան
ԼՈՍ ԿԱԹՈՍ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Մեր բոլոր միութիւններն ու կազմակերպութիւններն այդերակատարութիւն ունին տարբեր գաղութներու մէջ հայեցի դաստիարակութիւն ջամբելու աշխատանքին մէջ: Կարգ մը նոր կառույցներ, ինչպիսին է «Birthright Armenia», սփիւռքահայ երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան կը նպաստեն՝ Հայաստանի հետ շփուելու առիթներ ընծայելով: Աւելի երկար ծառայութիւն ունեցող պատանեկան եւ երիտասարդական մակարդակի հիմնական կառույցներն են Հ.Յ.Դ.Ի երիտասարդական միաւորները, Համագաղախը, Հ.Բ.Ը.Մ.ը, Հայ Եկեղեցին-ACYO եւ Հ.Մ.Ը.Մ.ը:

Վերոնշեալներէն իւրաքանչիւրը կը փորձէ հայաստիարակութեան խնդրին պատշաճ լուծումներ գտնել, որովհետեւ օրէ օր կը դժուարանայ նախ պատանի-երիտասարդութիւն ներգրուելու աշխատանքը, ապա՝ զանոնք հայկական շրջանակի մէջ պահելը: Առանց թերագնահատելու ազգային որեւէ կառույց, հայեցի դաստիարակութեան աշխատանքին մէջ հայկական կազմակերպութիւնները ունին որակական եւ քանակական տարբեր ցուցանիշներ: Ներկայիս եւ անցեալին, հայկական բոլոր գաղութներու մէջ ալ, Հ.Մ.Ը.Մ. թէ՛ հայ ծնողներու եւ թէ՛ պատանիներու համար ճանչցուած եւ ցանկալի կառույց մըն է:

Հ.Մ.Ը.Մ.Ի նպատակն է մարդակերտում եւ հայակերտում, թիրախ ունենալով հայ ծագումով ու երեխայ-պատանի-երիտասարդ: Այս կը նշանակէ հայապահպանում, հայկական ոգիի ջամբում եւ հայախօսութիւն: Պատ-

մականօրէն, եւ մինչեւ այսօր, Հ.Մ.Ը.Մ.ականը կը ստանայ հայկական արեւելում ունեցող դաստիարակութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութիւն է: Իր անդամներուն 60 տոկոսը արեւմտեան Սփիւռքի մէջ է, իսկ 40 տոկոսը՝ Մերձաւոր Արեւելք եւ Հայաստան: Ուրեմն, տարբեր գաղութներու մէջ Հ.Մ.Ը.Մ. հայեցի դաստիարակութեան մտահոգութիւնը կ'ապրի եւ միեւնոյն ժամանակ լաւագոյնս կրնայ փորձարկումի լաւ դաշտ հանդիսանալ: Հ.Մ.Ը.Մ. նաեւ երիտասարդ կազմակերպութիւն է եւ որպէս անդամ կ'ընդունի նոյնիսկ 4-6 տարեկան փոքրիկները: Որքան կանուխ կազմուի փոքրիկի մը հայեցի շրջանակը, այնքան աւելի կ'ըլլայ յանձնառու հայր դարբնելու եւ անոր հայերէն խօսակցական լեզուն ամրապնդելու կարելիութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի հայեցի դաստիարակութեան աշխատանքը ունի երկու երես -

Ա) Միութենական այլազան ծրագիրներու միջոցով հայեցի ինքնութեան, հպարտութեան եւ հայ ոգիի ջամբում, առաւել սկառուտական գիտելիքներու ճամբով արտադարոցական հայկական ուսման փոխանցում (հայոց պատմութեան, հայ եկեղեցւոյ, մշակոյցի, հայ ժողովուրդի ներկայ իրավիճակին ու այսօրուան խնդիրներուն առնչուած):



Բ) Առարկայական գիտելիքներու ամրապնդում ենթակայական միջոցներով, արտադպրոցական ձեռնարկներով, ազգային տոներու նշումով, ականդրութիւններու պահպանման ճամբով եւ ակմբային կեանքի նախաձեռնութիւններով:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի դպրոցական տարիքի անդամներուն 80 առ հարիւրը հայկական վարժարան կը յաճախէ: Ոչ-հայկական դպրոց յաճախող Հ.Մ.Ը.Մ-ական աշակերտներուն տոկոսը կը կազմէ 5 առ հարիւր:

Հ.Մ.Ը.Մ-ի հայեցի դաստիարակութեան առաքելութիւնը հայ հասարակութեան համար միշտ ալ պիտի մնայ անհրաժեշտութիւն մը: Ժամանակը պիտի չնուազեցնէ այդ առաքելութեան պահանջը: Հայկական այդ ինքնութեան կերտումը կը կատարուի եւ պիտի շարունակուի հետեւեալ պատճառներով:-

● Հ.Մ.Ը.Մ. առիթ կ'ընծայէ որ հայ մանուկներ կանուխ տարիքէն (4-6 տարեկան) եւ հետեւողական ձեւով (չաբաթօրեայ կամ աւելի) հայկական շունչով վառ մթնոլորտի մը մէջ ապրին:

● Հակառակ այն իրողութեան, որ այսօրուան հայ պատանի-երիտասարդները եւ ծնողները կրնան ոչ-հայկական ակումբներու անդամակցիլ, մարմնամարզն ու սկստուութիւնը միշտ ալ գրաւել ընտրանք պիտի մնան պատանի-երիտասարդներու համար եւ, հետեւեալ, Հ.Մ.Ը.Մ. իր ընծայած միջոցներով պիտի մնայ այժմէական:

● Հ.Մ.Ը.Մ-ական հայ երիտասարդները առիթն ու առաւելութիւնը ունին Հ.Մ.Ը.Մ-ի համագործակցին ընտանիքին ընդմէջէն այլ հայերու հետ մշակելու եւ զարգացնելու ընկերային երկարատեւ յարաբերութիւններ: Այս կապը զիրենք աւելի հաղորդակից կը պահէ հայկական արեւելում ունեցող շրջանակին հետ:

● Վերջապէս, ժամանակակից ընկերային մարտահրաւէրներու լոյսին տակ, հայ ընտանիքներ իրենց զաւակները ապահով եւ թմրեցուցիչներէ հեռու միջավայրի մը մէջ պահելու նպատակով, մարզական եւ սկստուական ծրագիրներու միջոցով գանտնք Հ.Մ.Ը.Մ-ի ընտանեկան միջավայրին կը վրաստահին:

Իրենց զաւակներու կազմաւորման տարիքին, ծնողներ մեծապէս կը գնահատեն այն իրողութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ. պատանիներու մէջ կ'արմատաւորէ այնպիսի արժէքներ, ինչպիսին են՝ քաղաքացիական հաւատարմութիւնը, ազգային հպարտութիւնն ու ինքնութիւնը, կարգապահութիւնը, խրմբային աշխատանքը, յարգանքը ուրիշին եւ երէցին հանդէպ, պատասխանատուութիւնը, ուրիշներու հանդէպ յանձնառութիւնը: Մարզակերտումը այս ձեւով կ'օգնէ հայակերտումին:

Հ.Մ.Ը.Մ. իր կառույցին եւ ծառայութիւններուն բերումով հայ հասարակութեան աւելի հասանելի է՝ քան այլ կազմակերպութիւններ: Ըստ լաւատեղեակ աղբիւրներու, զանազան գաղութներու հայկական վարժարաններու աշակերտութեան յարգելի տոկոսը՝ 21 առ հարիւրը Հ.Մ.Ը.Մ-ի անդամ արձանագրուած է, աւելի բարձր համեմատութեամբ՝ քան այլ կազմակերպութիւններու պարագային: Ներկայիս, միութեան անդամներու 25 հազարէն 18 հազարը 21 տարեկանէն

վար է, ինչ որ կը նշանակէ թէ Հ.Մ.Ը.Մ. ներկայիս մեծ թիւով դեռահաս հասարակութեան մը հայեցի դաստիարակութեան կ'օժանդակէ: Բայց նաեւ յստակ է, որ Հ.Մ.Ը.Մ. ցարդ չէ կարողացած հասնիլ ոչ-հայկական վարժարան յաճախող աշակերտներու: Աւելի կարեւորը ապագան է եւ ապագայի հորիզոնը լայն է, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. գիտակցօրէն հայկական շրջանակներէ հեռու մնացած հայ պատանի-երիտասարդութիւնը ներգրաւելը ապագայի թիրախ ընտրած է: Ազգային տեսանկիւնէն այս իրողութիւնը նաեւ կ'ընդգրկէ ռազմավարական արժէք:

Հ.Մ.Ը.Մ ԻՆՉՊԵՍ ԿԻՆԱՅ ԱՐԵՒՈՎ ՆՊԱՍՏԵԼ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Արտադպրոցական հայեցի դաստիարակութեան բնագաւառին մէջ Հ.Մ.Ը.Մ. կը հետապնդէ չորս նպատակ -

Ա. Փոքր տարիքէն հայկական ոգիի եւ պատկանելիութեան ամրապնդում:

Բ. Հայաստանի հետ հոգեկան եւ առարկայական կապերու ամրապնդում:

Գ. Աւելի յանձնառու երիտասարդ սերունդի մը կերտում:

Դ. Հայախօսութեան քանակական եւ որակական զարգացում:

ՀԱՅՎԱԿԱՆ ՈԳԻԻ ԶԱԳԱՑՈՒՄ

Վերելի առաջին երեք նպատակները կը նպատակադրեն հայ մանուկներու, պատանիներու եւ երիտասարդներու մէջ զարգացնել գիտակցուած հայկականութիւն:

Հայեցի դաստիարակութեան իր առաքելութեան առաջին երեք բաժիններով, հայ ինքնութեան եւ դիմագիծի, այսինքն՝ հայօրէն ապրելու եղանակը զարգացնելու գծով, Հ.Մ.Ը.Մ. ներկայիս բաւական արդիւնաւոր աշխատանք կը տանի:

● Սկստուական շարքերէ ներս հայեցի դաստիարակութիւնը միշտ օրակարգի վրայ է: Սկստուական ծրագիրները բաւական առիթ կ'ընծայեն հայկական արեւելումով նախաձեռնութիւններու: Արդէն իսկ ազգային դաստիարակութեան հետ առնչուած գիտելիքները կը վերամշակուին: Շեշտը կը դրուի լեզուի եւ մշակոյթի հետ կապ ունեցող արտադպրոցական աշխատանքներու վրայ, թէ՛ աւանդական եւ թէ՛ վերամշակուած միջոցներով: Կարող խմբապետներն ու դաստիարակներն են որ սկսած են դժբախտաբար պակսիլ:

● Հ.Մ.Ը.Մ. նաեւ առիթ կ'ընծայէ որ Սփիւռքէն երիտա-



սարդներ Հայաստան այցելեն, համագործակցին բանակումներ եւ մարզախաղեր կազմակերպելով: Այդ առիթը շատերու մէջ կը զարգացնէ ազգային հպարտութեան եւ պատկանելիութեան զգացում եւ կը նպաստէ հայօրէն ապրելու եւ հայ կեանքին աւելի մօտենալու:

● Հ.Մ.Ը.Մ. յաջողած է 18 տարեկանը բոլորած իր անդամներուն մեծ մասը, մասնաւորաբար սկստուները, փոխանցել գաղութային այլ պաշտօններու եւ գործօն կազմակերպութիւններու շարքերուն, եւ այդ լաւագոյն ապացոյցն է որ Հ.Մ.Ը.Մ. իր առաքելութիւնը յաջողութեամբ կը կատարէ:

Եթէ Հ.Մ.Ը.Մ. հայեցի դաստիարակութեան, հայեցի ոգիի կերտման գծով յաւելեալ ընելիք ունի, այդ ընելիքը հետեւեալն է:-

● Գիտակցուած հայկականութեամբ ապրելու եղանակը թէ՛ եւ ներկայիս ի գործ է, սակայն պէտք է աւելի արժեւորուի եւ բոլոր մակարդակի ղեկավար մարմիններու կողմէ Հ.Մ.Ը.Մ-ական ներքին քաղաքականութիւն դառնայ: Մարզիկներու մօտ աւելի ամուր հայկական արեւելում եւ հայկական ինքնութեան զգացում պէտք է զարգացնել: Այս մէկը հիմնականօրէն կ'ենթադրէ մարզիչներու դաստիարակութիւն եւ կարող խմբապետներու եւ դաստիարակներու պատրաստութիւն:

● Կեդրոնական եւ շրջանային ղեկավարութիւնը, մարզուժի եւ նիւթականի առնչութեամբ, մտածելակերպի եւ աշխատանքային ձեւերու բարեփոխութիւն պէտք է յառաջանէ: Ինչպէս որ հայկական վարժարանը պէտք ունի պիւտձէի եւ ուսուցչական մարդուժի, նոյնը պէտք է Հ.Մ.Ը.Մ-ին, որպէս արտադպրոցական դաստիարակութեան դարբնոց:

● Պետական եւ օտար վարժարաններու հայ աշակերտու-

թեան յատուկ մարզական եւ սկստական միաւորներ կազմակերպէ: Այս մէկը կ'ենթադրէ յարաբերական յատուկ աշխատանք եւ մարդուժի ներդրում:

● Երիտասարդ խմբապետներու կողքին՝ նշանակել հայ լեզուի փորձառու եւ մշակոյթին ծանօթ աւագ խորհրդատու անձեր (Mentors), որոնք օրինակ կրնան հանդիսանալ իրենց եւ իրենց ընտանիքի «գիտակցական հայկականութեամբ ապրելու եղանակով»:

● Թէ՛ մարզական եւ թէ՛ սկստական ծրագիրներու համար ձեռք բերել մասնագիտացած երիտասարդ խորհրդատուներ (Youth Counselors), որոնք հետեւողական ներկայութիւն ըլլան եւ պատշաճ վճարում ստանան:

● Հայեցի դաստիարակութեան աշխատանքին տրամադրել յատուկ պիւտձէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. հայեցի դաստիարակութեան իր առաքելութեան չորրորդ բաժինով, հայախօսութեամբ, աւելի դժուար կացութեան մէջ է:

Հ.Մ.Ը.Մ-ի համար հայերէն լեզուի գործածութիւնը նպատակային է եւ առանցքային կարեւորութիւն ունի: Սակայն, իրողութիւնը այն է, թէ ինչպէս Արեւմուտքի բոլոր պատանի-երիտասարդները, Հ.Մ.Ը.Մ-ի անդամներուն կողմէ եւս հայ լեզուի գործածութիւնը նահանջած է եւ դարձած է կարեւոր մարտահրաւէր: Ներկայիս, Հ.Մ.Ը.Մ-ի շատ մը մասնաճիւղերու շարքերուն կարեւոր մէկ մասը հայերէն գրել չի գիտեր, հայերէն չի խօսիր, եւ երբեմն չի հասկնար: Ինչ կը վերաբերի

այն ենթադրութեան, թէ ներկայիս օգտագործուող, հայերէնով գրուած սկաուտական դաստիարակչական գիրքերն ու գիտելիքները հասկնալի են սկաուտներու կողմէ, սխալ է ջախջախիչ մեծամասնութեան պարագային: Սխալ է նաեւ այն ենթադրութիւնը, թէ ներկայիս, Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներն ու մարզիկները աշխատանքներու ընթացքին միմիայն հայերէն կը խօսին:

Հայերէն լեզուի գործածութեան նահանջը կը վերագրուի երկու տարբեր ընկերային հոսանքներու.-

● Իրողութիւն է, որ արդի ժողովրդագրական փոփոխութիւնները առաջնորդած են Սփիւռքի հայկական կարգ մը գաղութներու դիմագիծի փոփոխութեան: Այս մէկը նաեւ առաջնորդած է հայկական տարբեր ենթամշակոյթներու յառաջացման եւ ինքն իր մէջ մեկուսացման: Այս իրողութիւնը ստեղծած է միասնականութեան պակաս եւ միջ-անդամական հաղորդակցութեան դժուարութիւն, հետեւաբար յառաջացած է նոր մարտահրաւէր: Արեւելահայերէն եւ արեւմտահայերէն խօսող երիտասարդութիւնը գիրար հասկնալու պատճառաբանութեամբ որդեգրած է տեղական երկրի լեզուն, որպէս հասարակ յայտարար:

● Հ.Մ.Ը.Մ. կ'արտացոլացնէ նաեւ մեր գաղութներու պատկերը, ուր խառն ամուսնութիւններու թիւի աճը, համաշխարհայնացումը եւ հաղորդակցութեան արդի միջոցներու տարածումը, հայերէն լեզուի գործածութեան նուազումը նոր սերունդը հեռացուցած են իր ազգային արմատներէն:

Միջին Արեւելքի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը (բացառելով կարգ մը մարզիկներ) տակաւին հայախօս է, սակայն Արեւ-

մուտքի Հ.Մ.Ը.Մ-ական կառոյցները կը տանջուին: Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Սփիւռքը կը ներառնէ Արեւմտեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգները, Գանատան, Արժանթինը, Աւստրալիան եւ Եւրոպայի զանազան շրջաններու երիտասարդ անդամները: Հայախօսութեան իմաստով, յարաբերաբար պատկերը աւելի լաւ է Գանատայի եւ Ֆրանսայի մէջ:

Ընդունելով հայախօսութեան նահանջին համագաղութային փաստը, Հ.Մ.Ը.Մ. մտադրած է իր անդամներուն հայերէն լեզուի գործածութիւնը առաւելագոյն մակարդակի հասցնել: Հ.Մ.Ը.Մ. ունի իր ընհանուր ռազմավարական ծրագիրը 11 ուղղութիւններով: Այդ ուղղութիւններէն մէկն է հայ լեզուի գործածութիւնը: Մօտեցումը գործնական է եւ չի նպատակադրեր հայախօսութիւնը պարտադրել բոլորին, այլ՝ անդամներու մօտ հայախօսութեան ենթահող պատրաստել: Հ.Մ.Ը.Մ-ի ռազմավարական մօտեցումն է քաջալերել հայերէն խօսակցական լեզուի գործածութիւնը եւ իր շարքերուն մէջ ստեղծել այնպիսի միջավայր մը, ուր հայ մշակոյթի ընտելացումը եւ մայրենի լեզուի գործածութիւնը եթէ ոչ սահուն, գէթ հպարտութեան զգացում ստեղծեն: Հ.Մ.Ը.Մ-ի հայեցի դաստիարակութեան ջամբումի՝ հայախօսութեան, գիտակցուած հայկականութեան եւ ազգային հպարտութեամբ մեծցող հայերու պատրաստութեան չորս բաղադրիչները հետեւեալներն են.-

1. Կատարել համագաղութային մանրամասն եւ գիտական ուսումնասիրութիւն մը յայտնաբերելու համար թէ՛

ա) Տարբեր երկիրներու Հ.Մ.Ը.Մ-ականները ի՞նչպէս (ի՞նչ լեզուով) կը հաղորդակցին իրարու հետ աշխատանքային գործունէութիւններու ընթացքին:

բ) Այդ հաղորդակցութիւնը ի՞նչպէս կ'ազդէ գործունէութեան եւ դաստիարակչական որակին վրայ եւ որքանով կը համապատասխանէ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան:

Այս աշխատանքին արդէն իսկ սկսած է Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան Ռազմավարական Յանձնախումբը:

2. Ծշղել երկլեզու միջավայրերու յատուկ հայախօսութեան (հայերէն լեզուով հաղորդակցութեան) նուազագոյն չափանիշները, անդամներու այն հատուածին համար, որ «կոտրտուած» հայերէնի մակարդակ մը ունի:

Տրուած ըլլալով որ Հ.Մ.Ը.Մ-ի անդամակցութիւնը կը բաղկանայ հայերէն լեզուի ըմբռնումի եւ արտայայտուելու այլազան մակարդակներէ, ծրագիր մը պիտի մշակուի Հ.Մ.Ը.Մ-ական այն հատուածին համար, որ հայերէն կը հասկնայ, բայց դժուարութիւն ունի արտա-



յատուելու եւ կամ անկարող է կարգալու:

ա) Այն մասնաճիւղերուն մէջ, ուր կարգ մը աշխատանքներ արդէն օտար լեզուով կը կատարուին, ճշդել Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւններուն ընթացքին հայախօսութեան (իբրեւ հաղորդակցութեան միջոց հայերէն լեզուի խօսակցական գործածութեան) նուազագոյն չափանիշը, մասնաւորաբար սկաուտական գործունէութեանց ընթացքին:

բ) Ապահովել ու պատրաստել դաստիարակչական պատշաճ նիւթեր հայերէն լեզուով ու բառամթերքով, բայց սկզբնական շրջանին եւ ժամանակաւոր կերպով նաեւ ոչ-հայերէն տառերով, հասնելու համար հաղորդակցութեան այդ նպատակին:

● Փորձառու դաստիարակներ մեզի կ'ըսեն թէ հինգ-վեց ամսուան ընթացքին, շաբաթը Մէկ ԺԱՄ աշխատանքով, չափահաս թէ ոչ, կրնան տառաճանաչ կրնան: Եթէ նիւթերը հայերէնով պիտի ըլլան, տառերը սորվիլը այդքան ալ դժուար չէ... կարեւորը սիրցնելն է:

● Այս յօդուածին նպատակը հայերէնի խօսակցական կամ գրական դասընթացքի մանրամասն առաջարկներ ներկայացընելն է: Բայց կ'արժէ յստակացնել, թէ գործնական լուծումներու կարեւորագոյն միջոցը մանուկ-պատանի-երիտասարդներու հոգիին մէջ իւրացուած վարժութիւն մը ստեղծելն է: Այսինքն՝ իրենք պէտք է մասնակից դառնան դաստիարակիչ գործունէութեան, իրենց մտածելու եւ ապրելու ձեւը բարեփոխուի հետեւողական ու համակարգուած կերպով, եւ այդ փոփոխութիւնը արժեւորուի եւ իրենց մտածելու ձեւին մէջ ամրապնդուի: Միջոցները զանազան են.- բառարան, համակարգիչ, համացանց, խտասալիկ եւ արդի արհեստագիտութեան բաղկացուցիչ բոլոր միջոցները: Երգերու եւ խաղերու ճամբով ուսուցումը հաստատուած ուրիշ միջոց մըն է:

Այս նպատակը պիտի մշակուի Հ.Մ.Ը.Մ-ական փորձառու մասնագէտներու կողմէ, իսկ գործադրութիւնը պիտի վստահուի սկաուտ խմբապետերու փորձառական կիրարկման (pilot projects):

3. Մշակել յատուկ ծրագիրներ այն անդամներուն համար, որոնք բնաւ հայերէն չեն խօսիր, անդամներու այն բաժնին համար (2-րդ կամ 3-րդ սերունդի հայեր, խառն ամուսնութիւններու ծնունդներ եւ այլն), որոնք ո'չ կը կարդան, ո'չ ալ կը խօսին հայերէն, այսինքն՝ գործնապէս չեն հասկնար հայերէն լեզուն:

ա) Մշակել հաղորդակցութեան ծրագիր մը, որպէսզի անոնք կարողանան հասկնալ, հաղորդակցիլ եւ հետեւիլ միութեան մնացեալ անդամներուն եւ աւելի հանգիստ գգան Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւններու ընթացքին:

բ) Մշակել աշխատանքային յատուկ ծրագիրներ, որպէսզի անոնք քաջալերուին հայերէնը գործածելու սկաուտական եւ մարմնամարզական ծրագիրներու ընթացքին (Օրինակ՝ ստեղծել հայախօսութեան, հայ մշակույթի եւ հայոց պատմութեան յատուկ սկաուտական նշանակ-պէճ մը):



Այս նպատակը պիտի մշակուի Հ.Մ.Ը.Մ-ական փորձառու եւ լեզուագէտ մասնագէտներու կողմէ, իսկ գործադրութիւնը պիտի վստահուի սկաուտ խմբապետերու եւ մարզիչներու, փորձառական կիրարկումով (pilot projects):

4. Հայերէն լեզու դասաւանդել Հ.Մ.Ը.Մ-ի անդամներու:

ա. Այլ միութիւններու հետ գործակցաբար քննել թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ. կրնայ սկսիլ արտադպրոցական հայերէն լեզու դասաւանդել իր երիտասարդ անդամներուն, իր գործունէութիւններուն ընթացքին կամ այլ:

բ. Վերլուծել թէ ո՞վ (ո՞ր դաստիարակը) կրնայ ոչ-դպրոցական միջավայրի պատշաճ դասընթացք մը պատրաստել, Սփիւռքի մէջ ծնած հայ երիտասարդներու համար, որոնք լաւագոյն պարագային հայերէն լեզուն կը գործածեն իբրեւ երկրորդ լեզու:

Այս նպատակը այլ միութիւններու-կառույցներու հետ համագործակցութեան կը կարօտի: Հ.Մ.Ը.Մ-աններէ աւելի լեզուագէտ մասնագէտներու պահանջը կայ: Հ.Մ.Ը.Մ-ի կրնայ վստահուիլ գործադրութիւնը, օգտագործելով իր մանուկ-պատանիներու փաղանգը, փորձառական կիրարկումով (pilot projects):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Երիտասարդ սերունդի յատուկ հայեցի դաստիարակութիւնը հաւաքաբար պիտի շարունակեն կատարել ծնողք, ուսուցիչ, եկեղեցի, կազմակերպութիւններ: Ռազմավարական իմաստով, սակայն, հայեցի դաստիարակութիւնը պէտք է ունենայ իրապաշտ պատկերացում եւ ծրագրուած քաղաքականութիւն: Արդ, կը թելադրուի որ՝

● Հայկական վարժարաններու մէջ դպրոցական կրթութիւնը մնայ հիմնական, բայց արտադպրոցական հայեցի դաստիարակութեան կարեւորութիւնը ստանայ համահաւա-

սար, եթէ ոչ՝ առաջնահերթ նշանակութիւն:

● Դաստիարակութեան թիրախը ընդարձակուի, հայ աշակերտութեան հինգ առ հարիւրէն եւ դպրոցական գրասեղաններէն անդին անցնելով:

● Առաջնահերթ եւ կարեւոր նկատուի հայեցի ոգիով ապրելու եղանակը, անհատի մը կեանքին մէջ գիտակցուած հայկականութեան եւ հայ ինքնութեան հզօրացման զարգացումը, տրուած ըլլալով որ հայեցի դաստիարակութեան հրամայականը այլեւս չի կրնար ենթադրել անպայման հայկական վարժարան յաճախել եւ հմուտ հայախօս ըլլալ:

● Գաղութներու մէջ շարունակուի արտադպրոցական ուսուցումի կազմակերպուած կառույցներու ընտրանքը, ըլլայ շաբաթօրեայ հայ լեզուի ուսուցում, մարզական, սկաուտական, արուեստ (երգի կամ երաժշտական դպրոց, պարախումբ), բայց սկսի կանուխ տարիքէն (6 տարեկանէն) եւ ընթանայ հետեւողականութեամբ եւ համադրուամբ:

● Ինչպէս դպրոցական դաստիարակութեան պարագային, արտադպրոցական դաստիարակչական կառույցներու յատուկ մարդուժ եւ նիւթական ծրագրուի եւ համապատասխան կրթանպաստ յատկացուի:

● Արտադպրոցական դաստիարակութեան ծիրին մէջ, նոյնանման առաքելութիւններով ուղեկից կազմակերպութիւններու միջեւ համագործակցութիւն ստեղծուի:

Արտադպրոցական ծիրէն ներս, Հ.Մ.Ը.Մ. կարեւոր կառույց մըն է, որուն նպաստը եւ ներուժը թերագնահատուած է: Հայեցի դաստիարակութեան իր առաքելութեան իբրեւ լուծում, Հ.Մ.Ը.Մ. ունի գործնական մօտեցում, հետեւեալ ձեւով:



● Հ.Մ.Ը.Մ. 4-6 տարեկանէն, հետեւողական կերպով, արեւմտեան Սփիւռքի եւ այլուր բնակող փոքրիկներուն կ'ընծայէ ազգային ոգի եւ պատկանելիութեան զգացում մշակելու մթնոլորտ, այս ձեւով կանուխ տարիքէն եւ իւրացուած վարժութեամբ զիրենք կապելով հայութիւնը յուզող խնդիրներու:

Իր ուղեւորական ծրագիրով՝

● Հ.Մ.Ը.Մ. այլեւս բաւարարուած չէ Միջին Արեւելքէն գաղթած շրջանակով, եւ սկսած է հայեցի դաստիարակութեան կարկինը ընդարձակել դէպի բոլոր ենթամշակոյթներու պատկանող հայ երիտասարդները:

● Հ.Մ.Ը.Մ. կարեկիւթիւններ կը մշակէ օտար վարժարան յաճախող պատանիները իր շաբաթը ներգրաւելու, անոնց մօտ հայկական արեւելում յառաջացնելու նպատակով, թէ՛ մարզական եւ թէ՛ սկաուտական ծրագիրներով: Այս նպատակին յաջողութիւնը կը կարօտի յարաբերական աշխատանքի եւ մասնագիտացած երիտասարդ խորհրդատուներու (Youth Counselors), որոնք հետեւողական ներկայութիւն են եւ պատշաճ վճարումի կը կարօտի:

Յաւելեալ ուշադրութիւն պէտք է ներկայացնէ՝

● Հայերէնով դիւրին արտայայտուող անդամներու կողքին մօտենալու նաեւ հայերէնով դժուար արտայայտուող խաւին, փորձելով հայախօսութեան մակարդակը բարձրացնել անոնց մօտ, երիտասարդ խմբապետներու կողքին՝ փորձառու, հայ լեզուին ծանօթ աւագ խորհրդատու անձերու (Mentors) օժանդակութեամբ:

● Որդեգրելով նոր քաղաքականութիւն մը, յատուկ թիրախ ունենալ ոչ-հայախօս բոլոր պատանիները եւ երիտասարդները: Հ.Մ.Ը.Մ. ասիկա կրնայ ծրագրել միջ-միութենա-



կան, միջ-կառուցային գործակցութեամբ, ի մասնաւորի ՀՕՄ-ի, Համազգայինի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ գործակցութեամբ: Այդ ձեւով, հայկական վարժարաններու կողքին, եւ անոնց գուգահեռ՝ կը ստեղծուի արտադպրոցական կառույց մը, որ զարկ կու տայ հայախօսութեան եւ հայեցի դաստիարակութեան:



Նման կառույցներ եւ ուղեկից միութիւններ հաւանաբար տալիք եւ ըսելիք պիտի ունենան արտադպրոցական հայեցի դաստիարակութեան համակարգի ստեղծման մասին: Յաջող ռազմավարութիւն մը կը պահանջէ լայնախոհութիւն, ուժերու համադրում եւ համագործակցութիւն: Արտադպրոցական դաստիարակչական ռազմավարութիւն մը մշակելու, գործադրութեան ուղեցոյց մը ունենալու եւ այս գծով իր դերակատարութիւնը յստակացնելու եւ գործադրութեան անցնելու համար, Հ.Մ.Ը.Մ-ի անմիջական քայլերը պէտք է ըլլան հետեւեալները՝

● Արտադպրոցական դաստիարակութեան համահաւասար կարեւորութեան այս գնահատումը փոխանցել ազգային այլ կառույցներու ղեկավարութեանց: Այս գծով անհրաժեշտ է համագործակցութեան դաշտերն ու անհրաժեշտութիւնները ճշդել, ինչպէս նաեւ ուժերու համադրում կատարել ՀՕՄ-ի,

Համազգայինի եւ Ազգային Առաջնորդարաններու հետ: Հ.Մ.Ը.Մ- կը հայթայթէ խմորը, արտադպրոցական աշակերտութիւնը, իսկ վերոնշեալ ազգային կառույցները՝ դաստիարակներու կորիզը (դաստիարակ պատրաստելը այլ հիմնական կէտ է): Այս ձեւով, հայկական վարժարաններու կողքին եւ անոնց գուգահեռ կը ստեղծուի արտադպրոցական կառույց մը, որ զարկ կու տայ հայախօսութեան եւ հայեցի դաստիարակութեան: Կարեւորը գաղափարը որդեգրելն է, գործադրութեան հեզ կամ բարդ ըլլալը եւ գործնականացումը բնականաբար ուսումնասիրութեան կը կարօտի:

● Հայերէն լեզուի եւ հայկական արեւելումով արտադպրոցական դաստիարակութեան համար յատուկ մարդուժ եւ նիւթական ապահովել: Ժամանակը հասած է, որ այս գծով Հ.Մ.Ը.Մ- իր ծրագիրը ներկայացնէ եւ խորհրդակցութիւններ ունենայ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքին հետ, Ազգային Առաջնորդարաններու, ազգային այլ կառույցներու ղեկավարութիւններու, ինչպէս նաեւ հայեցի դաստիարակութեան ջատագով ազգայիններու եւ բարերարներու հետ:

(Շար. 2 եւ վերջ)

with the complements of

Restaurant Al-Mayass

ՀԱՅՐԵՆԻ GAZETA.AM-Ի ԶՐՈՅՑԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ ՔՈՅՐ ՆԱՐԷ ԽԼՀԱԹԵԱՆԻ ՀԵՏ

ՄԿԱՌԻՏԸ ՄԱՔՈՒՐ Է ՄՏԱԾՈՒՄՆԵՐՈՎ, ԽՕՍՔՈՎ ԵՒ ԳՈՐԾՈՎ

Յարգազրոյցը՝ Դուսիա Ղազարեանի ԵՐԵՎԱՆ

Սկաուտութիւնը հիմնադրել է Ռոպրթ Սթիվընսըն Սմիթ Պէյտըն Փաուըը 1907 թուականին, Անգլիայում: Այն արագ տարածում է գտնում ինչպէս Մեծն Բրիտանիայում, այնպէս էլ ողջ աշխարհում: 1920 թ.ին Լոնտոնում տեղի է ունենում միջազգային առաջին սկաուտական բանակումը, իսկ ահա երկրորդ

բանակումի ժամանակ Ուէլսեան արքայազնը Փաուըըին շնորհում է Յիլվելլեան լորտի տիտղոս: 1919-1921 թթ. Յայաստանի առաջին Յանրապետութիւնում գործում էր Հ.Մ.Ը.Մ.ի (Յայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն) սկաուտական միութիւնը, որը խորհրդայնացումից յետոյ արգելուեց եւ տարագրուեց: Սակայն, սկաուտական համաշխարհային կազմակերպութիւնում, որպէս բացառութիւն, հայկական եռագոյնը ծածանուեց մինչեւ մեր օրերը եւ փոխանցուեց Հ.Ա.Ս.Կ.ին: Հ.Մ.Ը.Մ.ն իր մօտ 70-ամեայ տարագ-

Ո՞րն է Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութեան (Հ.Ա.Ս.Կ.) նպատակը:

- Սկաուտական կազմակերպութիւնը համաշխարհային կազմակերպութիւն է, որը գործում է շուրջ 162 երկրում եւ գերազանցապէս նպատակ ունի տուեալ պետութեան եւ հասարակութեան համար պատրաստելու պիտանի քաղաքացի: Ի տարբերութիւն այլ միջազգային կազմակերպութիւնների, սկաուտութիւնը չի ցանկանում ստեղծել համաշխարհայնացած անհատներ: Մասնաւորեցնելով խօսքս, ասեմ, որ Հ.Ա.Ս.Կ.ը վերահիմնադրուել է 1989 թ.ին եւ գործում է ցայսօր՝ նպատակ ունենալով կրթել հոգեպէս եւ ֆիզիքապէս առողջ սերունդ: Թերեւս ասածս բաւականին ամբողջական է հնչում, որովհետեւ հոգեպէս եւ ֆիզիքապէս առողջ սերունդ առաջին հերթին ենթադրում է պատասխանատու, գիտակից, դիմացինին օգնելու պատրաստակամ եւ ամենակարեւորը սեփական պարտքի գիտակցումով սերունդ: Հասկանալի է, որ բաւականին մեծ առաքելութիւն է իրեն վերագրում կազմակերպութիւնը, բայց տարիներ շարունակ փորձում է հաւատարիմ մնալ իր որդեգրած ուղեգծի:

Կազմակերպութիւնն ունի՞ սկզբունքներ, որոնց «դաւաճանելու» դէպքում սկաուտին հնարաւոր է հեռացնեն: Կա՞ն նման դէպքեր:

- Կազմակերպութիւնը գործում է ամբողջութեամբ յենւած որոշակի սկզբունքների հիման վրայ: Նրա աշխատանքները կազմակերպւում են Հ.Ա.Ս.Կ.ի ներքին ծրագիր-կանոնագրով: Կանոնադրութեան մէջ ամէն ինչ յստակ ճշդուած է եւ ամէն օղակ աշխատում է՝ ելնելով դրանից: Բուն սկաուտական աշխատանքներում իւրաքանչիւր սկաուտ առաջնորդւում է խոստման եւ դաւանանքի սկզբունքներով: Խոս-

տումն իրենից ներկայացնում է որոշակի բովանդակութիւն, որն անձը կարող է տալ 3-6 ամիս յետոյ՝ կազմակերպութեան մէջ լինելով: Դաւանանքը, բաղկացած 12 կէտից, մի ամբողջութիւն է, որին պէտք է հետեւի իւրաքանչիւր սկաուտ: Դաւանանքի 12-րդ կէտում ասուում է. «Սկաուտը մաքուր է մտածումներով, խօսքով եւ գործով»... եւ այլն: Խոստումը



րութիւնից յետոյ՝ 1989 թ. Դեկտեմբերի 2-ին, մի խումբ սփիւռքահայ եւ տեղացի ուսանողների ջանքերի շնորհիւ վերահաստատուեց Յայրենիքում: 1995 թ. Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ժողովը որոշում է կայացնում, որ Յայաստանում Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է շարունակի գործել Յայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (Հ.Ա.Ս.Կ.) անունով: 1995 թ. կազմակերպութիւնը Հ.Ա.Ս.Կ. անունով վերագրանցում է Յայաստանում: Այսօր կազմակերպութիւնը յստակ ու գիտակցուած քայլերով առաջ է գնում՝ մեծ դերակատարութիւն ունենալով երկրի հասարակական կեանքում: Յայ սկաուտների (պատանի հետախոյզ) առօրեայի, նպատակների, հասարակական կեանքում ունեցած դերի, ինչպէս նաեւ ապագայ ծրագրերի մասին Gazeta.am-ի հետ զրոյցում խօսել է Յայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութեան կենտրոնական գրասենեակի աշխատակից եւ խմբապետական խորհրդի անդամ Նարէ Խլղաթեանը: Եւ քանի որ հարցազրոյցը բաւականին երկար է, ապա այն կը ներկայացնենք հատուածաբար:



հետեւեալ կերպ է հնչում. «Պատուովս խոստանում եմ՝ լինել հաւատարիմ Աստուծոյն, ծառայել հայրենիքիս ու ազգիս: Միշտ օգնել ուրիշներին եւ գործել իբրեւ պարտականութեանս գիտակից, արի եւ վեհանձն մարդ»: Արդեօք այս կէտերը խախտելու դէպքում անձը հեռացւում է կազմակերպութիւնից: Ո՛չ, չի հեռացւում: Անձը՝ ի դէմս իր խմբապետի, որ-

պէս ճիշդ օրինակի, ուղեցոյց է ստանում, թէ ինչպէ՞ս վարելի: Եւ որքան մօտ է գտնուում իր խոստմանն ու դաւանանքին, այնքան աւելի արագ է բարձրանում եւ հասնում որոշակի աստիճանի: Այդ ամէնի արդիւնքում անձը հնարաւորութիւն է ստանում դառնալ պատասխանատու (խմբապետ) եւ իր պատկերացրածով ու սկաուտական կազմակերպութեան ուղեգծով դաստիարակել սերունդ: Կազմակերպութիւնից անձիք հեռացւում են խիստ կանոնադրային խախտումներ թող տալու պարագայում: Մօտ 10 տարուան սկաուտական փորձառութիւն ունեւ, եթէ չեմ սխալոււմ, գրանցուել է մէկ դէպք, երբ անձը հեռացուել է կազմակերպութիւնից, բայց կոնկրէտ ինչի համար, չեմ կարող ասել:

Դուք կազմակերպութեան ներսում իրար դիմում էք քոյր-եղբայր: Որո՞շ դէպքերում ձեզ նոյնացնում են աղանդաւորական շարժումների հետ: Արդեօ՞ք մտահոգիչ չէ:

- Տուեցիք մի հարց, որի հետ իսկապէս առօրեայում բախուում ենք: Մասնաւորապէս ծնողները, որոնք հետաքրքրուած լինելով սկաուտական համագեցեստով, աշխոյժ, կենսախինդ երիտասարդութեամբ ու պատանիներով, ուզում են իրենց երեխաներին անդամագրել եւ յանկարծ կողքից լսում են, որ կազմակերպութեան մէջ իրար դիմում են քոյր-եղբայր: Առաջին հարցը, որ միշտ տրուում է. «Դուք ո՞ր կրօնական շարժմանն էք պատկանում»: Ինձ համար դա ցաւալի է, որովհետեւ քոյր-եղբայր դիմելաձեւն առաջին հերթին սիրոյ եւ յարգանքի նշան է առ դիմացինին: Այսինքն՝ մեր մէջ առաջին հերթին դրուած է հետեւեալ սկզբունքը՝ եթէ մենք պատկանում ենք ազգին, ապա մի մեծ ընտանիքի անդամ ենք, որը նաեւ համաշխարհային բնոյթ է կրում: Դիմելաձեւը պայմանաւորուած է դիմացինին՝ որպէս մէկ ընտանիքի անդամ ընդունելու



սկզբունքով, որն «արա»յից ու «աղջի»ից հաստատ գերադասելի է:

Իւրաքանչիւր ոք կարո՞ղ է դառնալ ձեր կազմակերպութեան անդամ եւ դա անվճար է:

- Անդամագրման տեսանկիւնից կազմակերպութիւնը բաց է իւրաքանչիւրի առաջ: Անդամագրումն իրականացնում ենք 5 տարեկանից: 5-11 տարեկան երեխաներն աշխատում են առաջին տարիքային խմբում, տղաները կոչւում են գայլիկներ, իսկ աղջիկները՝ արծուիկներ: 12-16 տարիքային խմբում տղաները կոչւում են արիներ, աղջիկները՝ արեւոյշներ, իսկ 16-ից բարձր տարիքային խմբում տղաները կոչւում են երէցներ, աղջիկները՝ պարմանուհիներ: Նշեմ, որ կազմակերպութեանը յօժարակամ են անդամագրւում եւ կարող են ցանկացած պահի դուրս գալ այնտեղից: Երեխաներն ամսական իրենց գործունէութիւնների, յաճախումների համար չեն վճարում որեւէ դրամ, բացի անդամավճարից, որը խորհրդանշական է՝ 100-500 դրամ: Ցատակ է ամէն ինչ, թէ որտեղ են ծախսւում այդ անդամավճարները՝ գնւում են գրեթե անվճար, երկար ընդմիջումների ժամանակ նրանց համար նաեւ սնունդ:

Այսօր, եթէ ֆինանսական աջակցութիւն չունի կազմակերպութիւնը, նրան դժուար է գոյատեւելը: Դուք հովանաւորներ ունե՞ք:

- Կազմակերպութիւնը գործում է հասարակական հիմունքով եւ մնայուն եկամուտի որեւէ աղբիւր չունի: Հ.Ա.Ս.Կ-ի պիւտճէն գոյանում է անդամավճարներից, անհատ նուիրատուներից: Անձինք, որոնք մեծացել են կազմակերպութեան մէջ, հասել են որոշակի դիրքի ու ոչ պակաս հեղի-

նակութեան, ունեն նիւթական միջոցներ, հանդէս են գալիս բարերարութեամբ: Յաջորդ ֆինանսական օղակը ծնողներն են, որոնք ժամանակ առ ժամանակ օժանդակում են: Միւս աղբիւրն էլ դրամաշնորհներն են: Չնայած, պէտք է ասեմ, որ մեր կազմակերպութիւնը, միւսների հետ համեմատած, աւելի քիչ է զբաղւում դրամաշնորհներով: Հ.Ա.Ս.Կ-ը նախորդ տարի «Նաղաղութեան սուրհանդակ» դրամական ֆոնտից ստացաւ դրամաշնորհ, որով կարողացանք աշխատել ընկերային խնամքի հաստատութիւններում՝ նպատակ ունենալով ընկերային համարկում ապահովել տեղի երեխաների համար:

Ընդհանրապէս ի՞նչ դեր են կատարում սկաուտներն իրենց երկրի հասարակական կեանքում:

- Փորձում ենք աշխատանքն իրականացնել մանկապատանեկան եւ երիտասարդական դաշտում: Ելնելով տարիքային առանձնայատկութիւններից՝ սկաուտներն իրենց հասարակական աշխուժութիւնը դրսեւորում են տարբեր օղակներում՝ ի նպաստ մեր հասարակութեան: Արի-արեւոյշներն առաջին հերթին ներգրաւուած են ծառատունկերի, տարածքների մաքրման աշխատանքներում, որով փորձում են իրենց դրսեւորել ընկերային ճիշդ անհատներ: Իսկ երիտասարդներն աւելի շատ մասնակցում են տարբեր քննարկումների, հանրօգուտ աշխատանքների: Սկաուտական կազմակերպութիւնը, ի դէմս Երեւանի մասնաճիւղի, մաս է կազմում Երեւանի քաղաքաշինական խորհրդի, որի մէջ մտնում են մի շարք կառույցների ներկայացուցիչներ եւ կազմակերպում են համաերեւանեան տարբեր աշխատանքներ:

Սկաուտութիւնն արտադպրոցական, կամաւորական, ապառազմական, ինչպէս նաեւ ապաքաղաքական շարժում է: Այդ դէպքում ինչո՞ւ, երբ խօսւում է շարժման մասին, բոլորը կարծում են, թէ այն Հ.Յ.Դ.ական կառույց է: Ըստ ձեզ, ինչո՞ւ է մարդկանց մօտ նման կարծիք ձեւաւորուել:

- Կազմակերպութեան մէջ մանկապատանեկան տարիքն ինքնին հասկանալի է, որ քաղաքական ուղղուածութիւն չի կարող ունենալ: Իսկ խմբապետական խորհուրդը, որը սկաուտական գործադիր մարմին է եւ կենտրոնական վարչութիւնը, որը կազմակերպութեան վարչական մարմինն է, չափահաս անդամներից է բաղկացած: Անձը, ով 18 տարեկանից բարձր է եւ ինքն է ընտրել իր կենսաձեւը, իսկ, եթէ նա սկաուտական կազմակերպութեան անդամ է, ապա սկաուտութիւնն իր կենսաձեւն է, բայց դա որեւիցէ կերպով իրեն չի խոչընդոտում, կամ ինչ





որ ձեռով չի պարտաւորեցնում յարելու այս կամ այն քաղաքական հոսանքին: Մեր կազմակերպութեան մէջ անձը կարող է լինել ցանկացած կուսակցութեան անդամ եւ կարող է լինել բացարձակապէս անկուսակցական: Իսկ ինչ վերաբերում է Հ.Յ.Դ.Ի հետ նոյնականացնելու հարցին, ապա խօսքիս սկզբում նշեցի, որ կազմակերպութիւնը 1989 թ.ին վերահիմնադրուեց: Սա կարելի է նրբութիւն է, քանի որ սկաուտական կազմակերպութիւնը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարածքում եւս գործել է մինչեւ 1923 թ.: Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ կազմակերպութիւնը դադարեցրեց իր գործունէութիւնը, որից յետոյ սկաուտական շարժումը հայ իրականութեան մէջ չզարգարեց սփիւռքեան կառույցում: Հ.Մ.Ը.Մ-ի շրջանակներում սկաուտութիւնն իր գործունէութիւնը ծաւալեց Սփիւռքում, որտեղ Դաշնակցութեան հովանաւորութիւնն ունէր: Ուսումնասիրելով Սփիւռքի պատմութիւնը՝ իւրաքանչիւր ոք կը գայ այն եզրակացութեան, որ բոլոր հասարակական կազմակերպութիւնները պատկանում էին այս կամ այն կուսակցութեանը, որոնց թւում էր նաեւ Հ.Մ.Ը.Մ-ը: Սա է թերեւս միակ պատճառը: Սակայն պէտք է նշեմ, որ քաղաքական ուղղութեամբ երեխաները չեն դաստիարակուում: 1989-ին կազմակերպութիւնը վերահիմնադրուեց

եւ Հայաստանում եւ որոշ ժամանակ անց, կառույցն ամբողջացաւ: 1995-ին, Հ.Ա.Ս.Կ-ը, բացառապէս դրուելով ապաքաղաքական եւ ապառազմական հիմքերի վրայ, յայտ ներկայացրեց՝ դառնալու Համաշխարհային Սկաուտական Շարժման անդամ: Եթէ որեւէ քաղաքական ուղղութեամբ (օրինակ դաշնակցական) հայ սկաուտները դաստիարակուէին, ապա նրանք չէին կարող բախել Հ.Ս.Շ-ի դուռը:

Հրատարակուում են «Ես գայիկ եմ» եւ «Ես սկաուտ եմ» ուսուցողական ձեռնարկները: Ովքե՞ր են հեղինակները, ըն-



Թերցողները եւ դրանք ինչքանով են օգնում սկաուտութեան տարածման գործում:

- «Ես գայլիկ եմ» եւ «Ես սկաուտ եմ» գրքերը ուսուցողական ձեռնարկներ են պատասխանատու կազմի համար: Այն հանրամատչելի է, իւրաքանչիւր անձ կարող է ձեռք բերել եւ ընթերցել: Սակայն այն ոչ թէ սկաուտի սեղանի գիրքն է, այլ սկաուտ-պատասխանատուի: Հրատարակման վրայ աշխատել է Երեւանի ընդհանուր խմբապետ Վիգէն Յովհաննիսեանը: Հիմնականում գիրքն օգնում է պատասխանատուին զարգացնելու իր գիտելիքները, ապա դրանք փոխանցելու կազմակերպութեան նորագիր անդամին: Կ'ուզենամ անպայման յիշատակեմ կազմակերպութեան նշանաբանը, այն է՝ «Բարձրացիր՝ բարձրացրու»: Այսինքն՝ պատասխանատուն, հանդէս գալով որպէս անձ, ով յարաբերականօրէն բարձրացրել է իր գիտելիքը, փորձառութիւնը, հմտութիւնը:

Մարտի 27-ին կայացած կառավարութեան նիստում գործադիրը որոշում կայացրեց Երեւանի վարչական սահմանում 3 հեկտար անտառային հող անհատույց օգտագործման իրաւունքով տրամադրել կազմակերպութեանը: Վերջին տարիներին եւս տրամադրուել էր հողամաս՝ խաղահրապարակ կառուցելու նպատակով: Ինչպէ՞ս էք օգտագործելու տարածքը:



- 2001-ին Բիւրականում առաջին անգամ կազմակերպութեանը հող յատկացուեց երկարաժամկէտ վարձակալական հիմունքով, որի շրջանակներում Հ.Ա.Ս.Կ.ը սկսեց իր ճամբարային կեանքը ծաւալել Բիւրականում: Այնուհետեւ, տարիներ շարունակ բաւական բարեխիղճ վերաբերուելով իրեն տրամադրուած տարածքի հետ՝ կազմակերպութիւնը կարողացաւ վաստակել կառավարութեան վստահութիւնը: Մարդիկ նկատում եւ գնահատում են կազմակերպութեան կատարած աշխատանքը: Մօտ 1 հեկտար հողատարածք տրուել էր կազմակերպութեանը Երեւանի վարչական շրջանում, որը կառավարութեան շրջանում, որը կառավարութեան վերջին որոշման համաձայն համալրուեց եւս 3 հեկտարով: Հայանտառը տուեց յստակ երաշխաւորում, առ այն, որ սկաուտներն իրենց յատկացուած 1 հեկտարում ժամանակին կատարել են բոլոր գիւղատնտեսական աշխատանքները՝ ոռոգումը, ծառերը համապատասխան քիմիական նիւթերով մշակելը, տարածքի մաքուր պահելը եւ այլն: Դրա արդիւնքում յատկացուեց տարածքը, որը պէտք է ծառայի պատանիներին ու երիտասարդներին բնութեան գրկում կենսագործունէութիւն ծաւալելու:



Գեորգ Թորոյեան
ՊԵՅՐՈՒԹ

Ա. ՀԱՆԳՐՈՒՄԸ



20-րդ
ՄՈՆՏԻԱԼԸ

Ա. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ Պրագիլ գերագանցեց իր մրցակիցները: Խրուաթիոյ եւ Քամերունի յաղթելով, պրագիլցիք զօժուարութիւն ունեցան մեքսիքացիներուն դէմ, որոնք յամառ պայքարով յաջողեցան հաւասարութիւն խել կազմակերպիչ երկիրէն: Միւս երկու մրցումներուն մեքսիքացիք յաղթեցին Քամերունի եւ Խրուաթիոյ: Խրուաթները իրենց առաջին մրցումին թէեւ պարտութիւն կրեցին Պրագիլէն, սակայն տպաւորիչ մրցում մը ունեցան: Մեքսիքայի դէմ սակայն անոնք անշարժացան եւ պարտուելով դուրս մնացին: Անոնք իրենց ամբողջ բարկութիւնը թափեցին Քամերունի վրայ եւ տարին լայն յաղթանակ: Քամերունցիք յիշատակելի ոչինչ կարողացան ընել: Անոնք միայն Պրագիլի դէմ երկրորդ կիսախաղին քսան վայրկեան փութալով խաղացին եւ կոլ նշանակեցին:

Բ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ Հոլանտա եղաւ անգագելի: Առաջին մրցումը նախկին ախոյեան Սպանիոյ դէմ եղաւ իրենց ամէնէն զեղեցիկ մրցումներէն մէկը: Հոլանտացիք լուծեցին նախորդ աւարտականի իրենց վրէժը: Սպանացիք զոհ գացին իրենց չափագանց ինքնավստահութեան, բերդապահին եւ մարզիչին սխալներուն: Զիլիցիք եւս ներկայացուցին տպաւորիչ խաղարկութիւն եւ արդարօրէն գրաւեցին խմբակին Բ դիրքը: Աւստրալիոյ եւ Սպանիոյ յաղթելով չիլիցիք յուշեցին թէ այնքան ալ դիւրութեամբ պարտուող խումբ չեն: Աւստրալացիք եթէ իրենց երեք մրցումներն ալ պարտուեցան, ապա նկատի պիտի ունենալ անոնց մրցակիցներուն մակարդակը եւ նաեւ այն, որ անոնք յաջողեցան նեղել իրենց մրցակիցները: Հաւանաբար անոնց պաշտպանողականը կը մնար խոցելի:

Գ. ԽՄԲԱԿ

Քրոմպիա եղաւ այս խմբակին անառարկելի ախոյեանը: Ան իր երեք մրցումները աւարտեց յաղթանակով: Մինչդեռ Ասիոյ ներկայացուցիչը՝ Ճափոն ունեցաւ թոյլ խաղարկութիւն եւ ոչ մէկ մրցում կարողացաւ յաղթել: Երկրորդ դիրքի համար պայքարեցան յոյները եւ ֆղոսկրեայ Ափունքը: Յու-



նաստան-ֆղոսկրեայ Ափունք մրցումը եղաւ վճռորոշ: Յոյները յամառ պայքար մղեցին եւ կարողացան մրցաշարքի իրենց առաջին եւ միակ յաղթանակը արձանագրելով անցնել Բ հանգրուան:

Դ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ Քոսթա Ռիքա շրջեց բոլոր նախատեսութիւնները: Ան հանդիսացաւ մոնտիալի ամէնէն անակնկալ կազմը: Եւրոպայի հսկաները՝ Իտալիա եւ Անգլիա դուրս մնացին: Իտալիա իր առաջին մրցումին Անգլիոյ յաղթելէ ետք գրեթէ ապահոված կը կարծէր իր տոմսը, սակայն յաջողական երկու պարտութիւններ կրելով Քոսթա Ռիքայէն եւ Ուրուկուէյէն հրաժեշտ տուաւ մոնտիալին: Ի տարբերութիւն Իտալիոյ, ուրուկուէյցիք առաջին մրցումին Քոսթա Ռիքայէն պարտուելէ ետք յաջողեցան մնացեալ երկու մրցումները յաղթել եւ գերագանցել եւրոպացիները: Անգլիացիք ոչինչ յաջողեցան ներկայացնել: Անոնք հագիւ հաւասարեցան Քոսթա Ռիքայի հետ եւ գլխիկոր վերադարձան Անգլիա:

Ե. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մրցումները ընթացան դասական ձեւով: Յրանսացիք կարողացան գերագանցել իրենց մրցակիցները: Զուիցերիացիք Յրանսայի դէմ կրեցին ծանր պարտութիւն մը, սակայն էքուատորի եւ Հոնտուրասի յաղթելով հասան Բ հանգրուան: Հոնտուրասցիք հանդիսացան մրցաշարքի ամէնէն թոյլ կազմերէն մէկը: Իսկ էքուատոր եղաւ Հարաւային Ամերիկայի միակ կազմը, որ մոնտիալի առաջին հանգրուանէն դուրս մնաց:

Զ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ արժանութիւնցիք եղան անսխալական: Անոնք Մեսսիի առաջնորդութեամբ իրենց երեք մրցումները յաղթեցին: Պոսնիացիք, որ առաջին անգամ ըլլալով կը մասնակցէին, միայն վերջին մրցումին՝ Իրանի դէմ արթնացան եւ յաղթեցին: Նիժերիացիք ներկայացուցին ափրիկեան տոկուն փութալով եւ արդարօրէն անցան Բ հանգրուան: Իրան եւս ունեցաւ տպաւորիչ մրցումներ, սակայն անոր կը պակսէր փորձառութիւնը եւ կոլ նշանակող յառաջապահ մը:

Է. ԽՄԲԱԿ

Այս խմբակին հսկան՝ Գերմանիա իր առաջին մրցումին զգեստնեց Փորթուգալը: Ղանացիք պարտուելէ ետք Մ. Նահանգներէն փորձեցին յաղթել Գերմանիոյ եւ գերմանացիք մրցումի ընթացքին պահ մը ապրեցան այդ սարսափը, սակայն մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: Փորթուգալ-

ցիք Գերմանիոյ պարտութենէն չսթափած՝ Մ. Նահանգներու հետ հաւասարութիւն մը արձանագրելով գտնուեցան դժուար կացութեան մէջ: Երրորդ մրցումները եղան վճռորոշ: Գերմանիա յաղթեց Մ. Նահանգներու, իսկ Փորթուգալ՝ Ղանայի: Սակայն Մ. Նահանգներ շնորհիւ իրենց կողմնորոշման Գերմանիոյ ետին գրաւեցին Բ դիրքը: Այս մոնտիալը վստահաբար պիտի մնայ փորթուգալցի Քրիսթիանո Ռոնալտոյի մրցաշարքերու մասնակցութեան ամէնէն տխուր եւ սեւ էջը:

Ը. ԽՄԲԱԿ

Պելճիքացիք եղան այս խմբակի ալֆան ու օմեկան: Իրենց խմբային խաղարկութեամբ անոնք գերագանցեցին մրցակից կազմերը եւ թէեւ դժուար, բայց արդար յաղթանակներ տարին: Տպաւորիչ եւ անակնկալ խաղարկութիւն ցուցաբերեց արաբական միակ կազմը՝ Ալճերիան: Անոնք առաջին մրցումին դժուար տեղի տուին Պելճիքայի դէմ: Հարաւային Քորէայի դէմ անոնք ներկայացուցին յարձակողական զեղեցիկ խաղարկութիւն եւ կոլառատ մրցումով մը յաղթեցին ասիացիներուն: Ռուսներուն դէմ անոնք հաւասարեցան եւ դուրս ձգեցին Ռուսիոյ կազմը: Այս վերջինը ոչ մէկ հետաքրքրական մրցում ներկայացուց: Ռուսները չորս տարի ունին լաւապէս պատրաստուելու իրենց երկրին մէջ կայանալիք մոնտիալին: Ասիոյ ներկայացուցիչ Հարաւային Քորէա նոյնպէս արժանի մրցակից չեղաւ իր խմբակիցներուն:

Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Եթէ առաջին հանգրուանը յատկանշուեցաւ երրօրեայ երկիրներու ձախողութեամբ եւ «Ջարդ»ով, ապա երկրորդ հանգրուանը ամերիկեան խումբերու ձախողութեանց սկիզբն էր: Զիւլիցիք փենայթիներով տեղի տուին Պրազիլի դիմաց: Ուրուկուէյցիք պարտուեցան Ռոտրիկէզի Քոլումպիայէն: Հոլանտացիք վերջին վայրկեաններուն վերջ դրին մեքսիքացիներու յոյսերուն եւ դուրս ձգեցին զանոնք: Ֆրանսացիք հանգիստ յաղթանակ մը տարին Նիճերիոյ կազմին դէմ: Պելճիքացիք դժուարութեամբ, բայց գեղեցիկ մրցումով մը յաղթեցին Միացեալ Նահանգներուն: Արժանթինցիք շատ դժուար յաղթանակ տարին Զուիցերիոյ դէմ՝ մրցումի երկարաձգման վերջին վայրկեաններուն: Քոսթա Ռիքա-Յունաստան մրցումի 120 վայրկեանները աւարտեցան հաւասարութեամբ եւ Քոսթա Ռիքա փենայթիներով դուրս ձգեց Յունաստանը: Գերմանացիք եւս քիչ մը դժուարութիւն ունեցան Ալճերիոյ կազմին դէմ եւ վերջին վայրկեանին կարողացան խլել յաղթանակը:

Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Առաջին մրցումը իրարու դէմ կը հանէր Ֆրանսան եւ Գերմանիան: Ֆրանսացիք հին վրէժ մը ունէին Գերմանիոյ կազմէն: Անոնք 1982-ին եւ 1986-ին կիսաւարտականին պարտուած էին գերմանացիներէն: Մրցումի առաջին վայրկեաններուն նշանակուած կոլը եղաւ ճակատագրական: Գերմանացիք կարողացան պահել արդիւնքը, իսկ Ֆրանսական յարձակողականը չկարողացաւ ճեղքել Գերմանիոյ ամուր պաշտպանողականը:

Երկրորդ մրցումին, Պրազիլի կազմը դժուար բայց կարելոր յաղթանակ մը արձանագրեց Քոլումպիոյ դէմ: Այս մրցումին քոլումպիացիք չկարողացան ներկայացնել այն բարձր ու գեղեցիկ խաղարկութիւնը, որ նախապէս ունեցած էին: Պարտուելով անոնք հրաժեշտ տուին մոնտիալին:

Երրորդ մրցումին, Արժանթինի կազմը Գերմանիոյ նման կանուխ կոլ մը նշանակելով Պելճիքայի դէմ յաջողեցաւ շուրջ ութսուն վայրկեան պայքարիլ պահելու համար արդիւնքը: Պելճիքացիք ութսուն վայրկեան յարձակեցան, բայց ապարդիւն: Մեսսի եւ ընկերները յաջողեցան դիմադրել ու յաղթել:

Վերջին մրցումին, հոլանտացիք 120 վայրկեան տիրապետեցին Քոսթա Ռիքայի վրայ եւ բազմաթիւ առիթներ չկարողացան կոլի վերածել: Քոսթա Ռիքացիք եւս ունեցան առիթներ: Ճակատագրական փենայթիներով հոլանտացիք յաղթեցին եւ վերջ տուին Քոսթա Ռիքայի ոգիսականին:

ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆ

Վստահաբար, այս մոնտիալի եւ երկար ժամանակ բոլոր մոնտիալներու ամէնէն անմոռանալի մրցումներէն մէկը պիտի մնայ կիսաւարտականի Պրազիլ-Գերմանիա մրցումը, ոչ

թէ իր ներկայացուցած հետաքրքրականութեամբ կամ մակարդակով, այլեւ իր աննախատեսելի եւ անակնկալ մեծ արդիւնքով: Հաւանաբար ամէնէն մոլեռանդ գերմանացի համակիրն անգամ չէր երագեր թէ Գերմանիա կրնայ նման արդիւնքով զգեստնել Պրազիլը: Մրցումին առաջին կէս ժամուան ընթացքին ստեղծուեցաւ այն տպաւորութիւնը, որ պրազիլցիք դաշտ ներկայացած էին պարտուելու համար: Անոնց յետսապահ գիծը խայտառակ մրցում մը ներկայացուց: Անոնք Գերմանիոյ նշանակած կոլերու ժամանակ փոխանակ պաշտպանելու պարզապէս հանդիսատեսի դեր առած էին: Աւելին, Գերմանիոյ մարզիչ Լով մարզական բարձր ոգիով, դադարի ժամանակ իր մարզիկներէն պահանջած է յաւելեալ կոլեր չնշանակել, այլ պարզապէս մնալ զգօն եւ պահել յաղթանակը:

Երկրորդ մրցումը, որ իրարու դէմ կը հանէր Արժանթինն ու Հոլանտան, աւելի հաւասարակշռուած մրցում մը եղաւ: Արժանթինեան կազմը ներկայացուց մրցաշարքի իր լաւագոյն խաղարկութիւնը: Անոնց յետսապահ գիծը յաջողեցաւ չէզոքացնել հոլանտացիներուն վտանգաւոր յաւաքապահ զոյգը: Երկուստեք ստեղծուեցան առիթներ, սակայն արժանթինցիք աւելի վտանգաւոր էին: Մրցումի 120 վայրկեանները աւարտեցան առանց կոլերու: Ճակատագրական փենայթիներու ժամանակ նժարը թեքեցաւ Արժանթինի կողմը եւ անոնք հասան աւարտական:

3-4ՐԴ ԴԻՐՔԻ ՄՐՑՈՒՄԸ

Այս մրցումը եւս յատկանշուեցաւ Պրազիլի անփառունակ պարտութեամբ: Անոնք տակաւին չսթափած Գերմանիոյ պարտութենէն, կրեցին երկրորդ ծանր պարտութիւն մը: Առաջին քսան վայրկեաններուն, երբ արդիւնքը 2-0 էր, կարծուեցաւ թէ պիտի կրկնուի Գերմանիոյ մրցումին պատկերը: Բարեբախտաբար այս անգամ պրազիլցիք կարողացան աւելի ներդաշնակ խաղով մեծ պարտութենէ մը խուսափիլ: Միայն մրցումին վերջին վայրկեանին երրորդ կոլ մը ստանալով անոնք գլխիկոր հրաժեշտ տուին իրենց կազմակերպած մոնտիալին: Հոլանտացիք գրաւեցին երրորդ դիրքը:

ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ / ԳԵՐՄԱՆԻԱ ԱՄՈՅԵԱՆ

Գերմանիա-Արժանթին մրցումը կրկնութիւնն էր 1986-ի եւ 1990-ի աւարտականներուն: Անոնք երրորդ անգամ ըլլալով իրարու դէմ կու գային աւարտականին: Գերմանացիք զգոյշ էին Մեսսիի յարձակումներէն, իսկ արժանթինցի յետսապահները լաւապէս կը կատարէին իրենց դերը: Արժանթինցիք երկար, շատ երկար ժամանակ պիտի չներեն Հիկուէնի, որ բերդապահին հետ առանձին մնալով աճապարեց եւ գնդակը հարուածեց բերդէն շատ հեռու: Նման երկրորդ առիթ մը չներկայացաւ արժանթինեան կազմին, իսկ երբեք պիտի չներկայանայ Հիկուէնի: Մրցումին առաջին 90 վայրկեանները հաւասար աւարտելէ ետք, կէս ժամ երկարաձգման ընթացքին ակներեւ էր որ արժանթինցիք որոշած էին երթալ բախտի փենայթիներուն: Սակայն Կոթցէի դաշտ ներկայանալը ամէն ինչ խանգարեց: Մրցումի աւարտէն քանի մը վայրկեան առաջ ան գեղեցիկ կոլ մը նշանակելով տիտղոսը պարգեւեց Գերմանիոյ, որ իր պատմութեան մէջ չորրորդ անգամ ըլլալով դարձաւ աշխարհի ախոյեան:

ՄՈՆՏԻՎԸ ԹԻԲԵՐՈՎ

- 64 մրցումներու ընթացքին նշանակուեցան 171 կուլեր (միջին հաշուով 2.67 կուլ իւրաքանչիւր մրցումի): Առաջին հանգրուանին նշանակուեցան 136 կուլեր, երկրորդ հանգրուանին՝ 18 կուլեր, երրորդ հանգրուանին՝ 5 կուլ եւ վերջին չորս մրցումներուն՝ 12 կուլ:

- Առաջին հանգրուանին առաւելագոյն թիւով կուլեր նշանակուեցան Բ. խմբակի մրցումներուն ընթացքին (22), իսկ նուազագոյն թիւով կուլեր նշանակուեցան Դ. խմբակի մրցումներուն (12):

- Առաւելագոյն կուլեր նշանակող կազմը եղաւ Գերմանիա (18 կուլ): Նուազագոյն կուլեր ստացող կազմը հանդիսացաւ Քոսթա Ռիքա (2 կուլ):

- Առաւելագոյն կուլեր ստացող կազմը եղաւ Պրագիլ (14 կուլ), իսկ նուազագոյն թիւով կուլեր նշանակեցին Քամերուն, Յոնտուրաս եւ Իրան (մէկական կուլ):

- Մրցաշարքի կուլ-սքորըըը հանդիսացաւ քլոմպիացի ճէյմս Ռոտրիկէս: Ան հինգ մրցումի ընթացքին նշանակեց վեց կուլ:

- Մրցաշարքի ամենէն կանուխ կուլը նշանակեց ամերիկացի Տէմփսի, Ղանա-Մ. Նահանգներ մրցումի 30-րդ երկվայրկեանին: Իսկ ամենէն ուշ կուլի հեղինակը դարձաւ ալճերիացի ճապու՝ Գերմանիա-Ալճերիա մրցումին 121-րդ վայրկեանին:

- Մրցաշարքին առաջին կուլը նշանակեց պրագիլցի Մարսելօ, Պրագիլ-Խրուաթիա մրցումին 11-րդ վայրկեանին, իր բերդէն ներս:


- Մրցաշարքին առաջին փենալթին նշանակեց պրագիլցի Նէյմար, Պրագիլ-Խրուաթիա մրցումին 71-րդ վայրկեանին:

- Մրցաշարքի ամենէն կանուխ փենալթին նշանակուեցաւ Պրագիլ-Հոլանտա մրցումին 3-րդ վայրկեանին: Փենալթին նշանակեց Վան Փերսի:

- 64 մրցումներէն 51 մրցում աւարտեցաւ յաղթանակով, իսկ 13 մրցում՝ հաւասարութեամբ, որոնցմէ եօթն՝ սպիտակ (0-0): Չորս մրցումներ աւարտեցան վիճակաձգութեան փենալթիններով:

- Քամերուն, Աւստրալիա եւ Յոնտուրաս իրենց երեք մրցումներն ալ աւարտեցին պարտութեամբ: Վերոնշեալ երկիրներու կողքին, ճափոն, Անգլիա, Իրան, Ղանա, Ռուսիա եւ Հարաւային Քորէա ոչ մէկ յաղթանակ արձանագրեցին:

- Երկու մարզիկներ՝ գերմանացի Թոմաս Միլըր եւ զուիցերիացի Խերտան Շաքիրի դարձան հեթրիքի հեղինակներ:



- Գերմանացի Միրոսլաւ Զլոզէ Պրագիլ-Գերմանիա մրցումին երկրորդ կուլը նշանակելով դարձաւ մոնտիալներու պատմութեան լաւագոյն կուլ-սքորըըը՝ 16 կուլով: Նախորդ մրցանիշը կը պատկանէր պրագիլցի Ռոնալտոյի (15 կուլ):

- Առաջին հանգրուանի աւարտին եւրոպական 13 կազմերէն միայն վեցը յաջողեցան անցնիլ Բ. հանգրուան: Ամերիկեան ցամաքամասէն Յոնտուրաս եւ էքուատոր դուրս մնացին, իսկ մնացեալ կազմերը անցան Բ. հանգրուան: Ափրիկեան երկու կազմեր կարողացան անցնիլ Բ. հանգրուան: Իսկ Ասիոյ ներկայացուցիչներէն որեւէ մէկը Բ. հանգրուան չանցաւ:

- Հոլանտա, Քլոմպիա, Արժանթին եւ Պելճիքա իրենց առաջին հանգրուանի երեք մրցումներն ալ աւարտեցին յաղթանակներով:

- Ախոյեան Գերմանիոյ կողքին, Հոլանտա եւ Քոսթա Ռիքա մնացին անպարտելի:

- Ամենամեծ արդիւնքով յաղթանակը արձանագրեց Գերմանիա՝ կիսաւարտականին Պրագիլի դէմ, 7-1 արդիւնքով: Նշեալ արդիւնքը մոնտիալներու պատմութեան մէջ, կիսաւարտականներու ընթացքին արձանագրուած ամենամեծ արդիւնքն է: Այս արդիւնքը նաեւ Պրագիլի կրած ամենածանր պարտութիւնն է թէ՛ մոնտիալներուն եւ թէ՛ առհասարակ ֆութպոլի իր պատմութեան մէջ: Այս արդիւնքը նաեւ ամենամեծ արդիւնքն է, որ կազմակերպիչ երկիր մը կը պարտուի իր դաշտին վրայ, մոնտիալի մը ընթացքին:

- Կոլառատ մրցումներ եղան Ֆրանսա-Չուիցերիա (5-2), Հոլանտա-Սպանիա (5-1), Հոլանտա-Աւստրալիա (3-2), Արժանթին-Նիճերիա (3-2), Պրագիլ-Քամերուն (4-1), Քլոմպիա-ճափոն (4-1) եւ Ալճերիա-Հարաւային Քորէա (4-2) ճակատումները:

- Գերմանիա հանդիսացաւ եւրոպական առաջին երկիրը, որ յաջողեցաւ ամերիկեան ցամաքամասին վրայ ախոյեան դառնալ: Այժմ եւրոպացիք աշխարհի ախոյեանութեան տիրացած են 11 անգամ, իսկ հարաւային ամերիկացիք՝ 9 անգամ:



Յուշանուէրի
յանձնում:



Յորելենական տարեդարձի կազմակերպիչ
յանձնախումբը գեղարուեստական յայտագրին
մասնակցած արուեստագէտներուն հետ:

ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ը ՀԱՐԻՒՐ ՏԱՐԵԿԱՆ

Թղթակից ԳԱՅԻՐԷ

1 914-ին, Գահիրէի մէջ, խումբ մը հաւատաւոր մարգասէր երիտասարդներ, գլխաւորութեամբ Ստեփան Ամիրայեանի, կը հիմնեն «Արարատ» մարզական միութիւնը, որ տասնամեակներու բեղուն գործունէութեամբ եւ իր հասցուցած հարիւրաւոր երկսեռ մարզիկներով, միութեան անունը բարձր կը պահէ

Եգիպտոսի հիւրընկալ ափերուն վրայ:

Հետագային, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան դրօշին տակ, իբրեւ անոր առաքելութեան հաւատաւոր մէկ անդամը՝ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ», մարզական իր գանազան ճիւղերուն փայլուն յաջողութիւններով եւ իրերայաջորդ սերունդներու դաստիարակութեամբ, կը յարատեւէ, դար մը ամբողջ կը գոյատեւէ՝ հասնելու համար փառապանծ 100-ամեակի տարին:

Այս նշանակալից առիթով, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութիւնը եւ անոր կից գործող հարիւրամեակի յանձնախումբը ձեռնարկներու շարքով մը ծրագրած են նշել «Արարատ»ի յորելենական տարեդարձը: Այդ ձեռնարկներու շարքին առաջինը՝ ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 26 Յունիս 2014-ին, Հելիոպոլսոյ «Յուսաբեր» ակումբի «Լ. եւ Ս. Գարազաշեան» սրահին մէջ:

Կազմակերպիչ յանձնախումբին հրաւերին ընդառաջելով ձեռնարկին ներկայ եղան Եգիպտոսի մօտ Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Արմէն Մելքոնեան, Եգիպտահայոց Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեան, Հայ Կաթողիկէ Վիճակաւոր Գրիգոր Օգոստինոս Գուսան, Գահիրէի հոգեւոր հովիւ Յակոբ Քհնյ. Յակոբեան, Գահիրէի թեմական եւ քաղաքական ժողովներու ատենապետներ եւ անդամներ, Աղեքսանդրիոյ Ազգային իշխանութեան անդամներ, եգիպտահայ մարզական ակումբներու վարչականներ եւ միութենական ներկայացուցչական դէմքեր:


Ճաշկերոյթը խանդավառեցին յատկապէս



Դէպի հանդիսասրահ:



Հանդիսավար քոյր Սուէ Կրպոյեան-Պայրամեան:



Լիրանանէն հրաւիրուած երգիչ Արարատ Ահարոնեան, ար-
ւեստագէտներ Շանթ Տիշչէքէնեան եւ Յարութ Գլընճեան:

Հանդիսութեան սկիզբը, օրուան հանդիսավար քոյր Սուէ
Կրպոյեան-Պայրամեան Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի անունով բա-
րի գալուստ մաղթեց ներկաներուն, ոգեկոչեց յիշատակը
«Արարատ»ի հիմնադիր սերունդի նուիրեալներուն եւ յարա-
տեւութիւն մաղթեց «Արարատ»ի միութենական գործու-
նէցութեան, հայութեան գոյապայքարի ճամբուն վրայ բարձր
պահելով Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշը:



Մեծապէս ողջունելի էր եգիպտահայ բոլոր միութիւննե-
րու ներկայացուցիչներուն մասնակցութիւնը յոբելեանական
այս ձեռնարկին: Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Նուպար»ի վարչու-
թեան անունով ատենապետ ժիրայր Տեփոյեան ինքնատիպ
յուշանուէր մը յանձնեց յոբելեար Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի
ատենապետ եղբ. Վարդան Վ. Գազանճեանին:

Շնորհաւորական ծաղկեփունջեր ղրկած էին Գահիրէի եւ

Աղեքսանդրիոյ Ազգային իշխանութիւնները, Գահիրէի «Յու-
սաբեր» Մշակութային Ընկերակցութիւնը եւ Հայ Կապոյտ
Խաչը:

Հայկական եւ բազմալեզու պարեղանակներով լիացած
ճաշկերոյթին տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւն-
ներ: Կատարուեցաւ վիճակահանութեան վաճառք եւ վիճա-
կաձգութիւն: Բախտաւորները արժանացան արժէքաւոր
պարգեւներու:

Վարձքը կատար Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան եւ
յոբելեանական այս ձեռնարկի կազմակերպիչ յանձնախում-
բին, որոնց անմնացորդ նուիրաբերումով կարելի եղաւ յաջո-
ղութեամբ պսակել ճաշկերոյթը, արժանանալով բոլորին
գնահատանքին:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԲՈՒԷՅԹԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ

3. Սերոբեան ԲՈՒԷՅԹ

Նովանաւորութեամբ Քուէյթի եւ արաբական ծոցի երկիրներու կաթողիկոսական փոխանորդ Մասիս Մ. Վրդ. Զոպուլեանի, նախագահութեամբ տէր եւ տիկ. Յակոբ Յովակիմեանի եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի վարչութեան, Ուրբաթ, 30 Մայիս 2014-ին, տեղի ունեցաւ մասնաճիւղին աւանդական Մա-

յիսեան փառատօնը, նուիրուած՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 96-ամեակին: Հանդիսութեան պատուոյ հիւրն էր Քուէյթի մէջ Հ.Հ. հիւպատոս Արմէն Սարգիսեան:

Ներկայ էին գաղութին պատկան մարմիններու ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ, ինչպէս նաեւ մօտ 500 հանդիսականներ:

Փառատօնին հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Քուէյթի եւ Հայաստանի քայլերգներով:

Բացման խօսքը արտասանեց վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Պաղճեան: Ան իր խօսքին մէջ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի իսկական նպատակն է չարքաշ,

կարգապահ, վեհանձն հայ պատանիին ու պարմանուհիին մօտ զարգացնել հայրենասիրութեան եւ ազգասիրութեան գգացումները:

Իյօսք արտասանեց նաեւ եղբ. Յակոբ Յովակիմեան: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան մօտ կը զարգացնէ ազգային արժէքներ՝ հայկական մտածելակերպ, հայեցի դաստիարակութիւն եւ կարգապահութիւն, մէկ խօսքով հայութեան եւ Հայաստանին ծառայելու եւ նուիրուելու պատրաստակամութիւն:

Այս առիթով մասնաճիւղին սկաուտութիւնը ներկայացուց կոկիկ յայտագիր մը, որ ընդգրկեց բուրգ, ձեռային աշխատանք, մարտական մարզախաղեր, առա-





ջին բոյժ օգնութեան ներկայացում, երգ, կակուղ թաթիկի կանչ, պար, մարզական ձեւեր եւ ասմունք: Յիշատակութեան արժանի է մասնաճիւղին շեփորախումբի կրտսերներու այս տարուան առաջին ելոյթը, որ արժանացաւ ներկաներու քաջալերանքին եւ ծափահարութեան:

Յաջորդեց տողանցքը: Հնչեց շեփորախումբը, որ առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ականներու փաղանգը: Յաղթական քայլերով անցան արիները, արենոյճներն ու գայլիկները: Անոնք խումբ-խումբ շարուեցան դաշտին կեդրոնը՝ հանդիսականներուն դիմաց:

Այնուհետեւ կատարուեցաւ աստիճանատուչութիւն, սկաուտական կարգի փոխանցում եւ լաւագոյն խումբերու գնահատում: Հանդիսութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի վարչութիւնը Հայաստանի Ա. Հանրապետութեան 96-ամեակին առիթով «Ծառայութեան» շքանշանով գնահատեց երկար տարիներ միութեան ծառայած եղբ. Յակոբ Յովակիմեանը:

Ապա հրաւիրուեցաւ հանդիսութեան նախագահ եղբ. Յակոբ Յովակիմեան՝ վարչութեան կողմէ պատրաստուած յատուկ յուշանուէրները յանձնելու համար Մասիս Ծ. Վրդ. Զոպուլեանին եւ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսին:

Հուսկ, հրաւիրուեցաւ Մասիս Ծ. Վրդ. Զոպուլեան արտասանելու համար փառատօնին փակման խօսքը: Հայր Սուրբը






իր խօսքին մէջ նախ անդրադարձաւ Մայիս 28-ի խորհուրդին ու պատգամին, կոչ ուղղելով ներկաներուն եւ մանաւանդ նոր սերունդի զաւակներուն հաւատարիմ մնալու Մայիս 28-ը կերտող սերունդին, հերոսներուն ու նահատակներուն, որոնք հիմնեցին Հայաստանի Հանրապետութիւնը: Ապա, Հայր Սուրբը Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան անդրադառնալով ըսաւ, թէ ան կը մարմնաւորէ հայութիւնը իր անցեալով ու ներկայով, իր մաքառումներով ու երազներով ու մանաւանդ՝ իր լուսաշող ապագայով: Հայր Սուրբը աւելցուց, որ

Հ.Մ.Ը.Մ-ը խտացած կամքն ու տեսիլքն է հայութեան, ան սփիւռքահայութեան բաբախող սիրտն է, վաւերական հայութեան կենդանի արտայայտութիւնը: Քուէյթի Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան անդրադառնալով, Հայր Սուրբը մաղթեց, որ սկսուածներուն ու արենոյշներուն ճամբով հայ երիտասարդին կեանքը հայութեան սրբազան արժէքներով լեցուն կեանք մը ըլլայ ու այդ արժէքներուն ի սպաս կեանք մը ըլլայ:

Փառատօնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
 Beirut - Lebanon
 Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
 Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
 E-mail: hratch@goldenmountains.com
 hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐ ՌՈՒՄԹՊԵՒԻ ՄԷՁ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

4-8 Յունիսին, Վրաստանի Ռուսթավի քաղաքին մէջ տեղի ունեցաւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Եւրոասիական շրջանի ազգային սկաուտական կազմակերպութիւններու ղեկավարներու, գործաւարներու եւ «Խաղաղութեան սուրհանդակներ» ծրագրի համակարգողներու սեմինարը:

Սեմինարը ընթացաւ զրական մթնոլորտով: Ազգային սկաուտական կազմակերպութիւններու ներկայացուցիչները ներկայացուցին իրենց աշխատանքները, որոնց միջոցով կատարուեցաւ շրջանին մէջ տիրող ընդհանուր վիճակի քննարկում:



Շրջանային կոմիտէութեան խորհրդական Ն. Ակատով սեմինարի մասնակիցներուն կատարեց վարժութիւններ՝ ներկայացնելով շրջանին մէջ գոյութիւն ունեցող թերացումները:

Միաժամանակ տեղի ունեցաւ ցանցի ընդլայնման եւ «Խաղաղութեան սուրհանդակներ» նախաձեռնութեան շրջանակներուն մէջ իրագործուող ծրագիրներու սեմինար: Հ.Ս.Շ. Բիւրոյի աշխատակից Ս. Մարքէզ բացատրեց ցանցին աշխատանքի դրութիւնը եւ յորդորեց աւելի աշխոյժ ըլլալ: Իսկ շրջանային գրասենեակի անդամ Տ. Սմիկովսկայա բացատրեց այն ընթացքը, որուն միջոցով իւրաքանիւր ազգային սկաուտական կազմակերպութիւն

կրնայ դրամաշնորհային իր ծրագիրը ներկայացնել MoP ֆոնտ:

Բոլոր երկիրներու «Խաղաղութեան սուրհանդակներ» այցելեցին Ռուսթավի դպրոցներէն մէկը, ուր հաճելի ժամանակ անցուցին տեղւոյն դպրոցականներուն հետ:






ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 39-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ




Տարիներու աւանդութեան համաձայն, Յուլիսի առաջին շաբաթավերջը յիշատակելի եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու ընտանիքին համար: Արդարեւ, ամիսներ տեւող մարզական հաճելի ու հետաքրքրական մրցումներէ ետք, Նաւասարդեան 39-րդ մարզախաղերը իրենց աւարտին հասան յաղթանակի պարահանդէսով, փակման հանդիսաւոր տողանցքով եւ ժողովրդային փառատօնով:

Նաւասարդեան 39-րդ մարզախաղերը վայելեցին

տէր եւ տիկ.Պետիկ եւ Մարօ Ֆերմանեաններու նախագահութիւնը: Տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը հռչակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յամլէթ Չրախճեան:


Այս էջերով ներկայացուած նկարները խօսուն վկայութիւնները կը հանդիսանան Նաւասարդեանի փակման գեղեցիկ մթնոլորտին, տպաւորիչ իր տողանցքով եւ խանդավառ իր փառատօնով:







ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԳՕԳՕ ՊԱՂԵԱՆԻՆ ԿԸ ՅԱՆՁՆԷ Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ԵՒ ԶԱՅՆ Կ'ԱՐԺԱՆԱՑՆԷ ՅԱՏՈՒԿ ՄԵՏԱԼԻ



16 Յունիսին, Հ. Հանրապետության Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գօգօ Պաղեանին յանձնեց Հ. Հանրապետութեան քաղաքացիութեան անձնագիրը եւ ոսկէ մետալ:

Հ. Հանրապետութեան նախագահի արտօնութեամբ, Հ. Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան վերապահուած է

սփիւռքահայ անուանի գործիչներուն Հ.Հ. քաղաքացիութեան անձնագիր յանձնելու իրաւունքը:

Եղբ. Գօգօ Պաղեան ծնած է 1948-ին, Լիբանան: Ան կը բնակի Մ. Նահանգներու մէջ: Եղբ. Պաղեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղած է 1995-2003, իսկ Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ՝ 2007-2011: 2009-էն մինչեւ օրս ան Արեւմտեան Մ. Նահանգներու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամ»ի փոխ նախագահն է:

Հ.Հ. քաղաքացիութեան անձնագիրին յանձնումը կատարեցաւ հանդիսաւոր արարողութեամբ: Եղբ. Պաղեան կատարեց երգումը, ապա նախարար Հրանոյշ Յակոբեան անոր յանձնեց Հ.Հ. քաղաքացիութեան անձնագիրը:

Այս առթիւ իր արտասանած խօսքին մէջ, նախարարը շեշ-

տեց եղբ. Պաղեանի ազգանուէր գործունէութիւնը յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Բարձր գնահատելով եղբ. Գօգօ Պաղեանի սփիւռքահայ երիտասարդները հայ պահելու քառասնամեայ վաստակը՝ նախարարը զայն պարգեւատրեց Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան ոսկէ մետալով: «Գօգօ Պաղեանը այն եզակի հայերէն է, որ մասնակցած է Վիէթնամի պատերազմին: Զայն կը ճանչնան թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ հայրենիքի մէջ, եւ Հ.Հ. քաղաքացիութեան անձնագիրը հայազգի գործիչը յաւերժ կը կապէ մայր հայրենիքին», նշեց նախարարը:

Իր կարգին, եղբ. Պաղեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան իրեն ցուցաբերած բարձր գնահատանքին համար եւ պատրաստակամութիւն յայտնեց նոյն ոգիով շարունակել հայապահպանման նուիրուած իր ջանքերը:



«ՊՈՅ ՍԿԱՌԻՏՅ ԱՅ ԱՄԵՐԻԿԱ»Ն Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՐԵՔ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԿԸ ՇՆՈՐՀԷ «ԱՐԾԻԻ» ՇՔԱՆՇԱՆ

**Թղթակից
ԿԼԵՆՏՅԼ**



Ամերիկայի «Պոյ սկաուտս աֆ ամերիկա» կազմակերպությունը Հ.Մ.Ը.Մ-ի Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղէն երեք սկաուտներ մեծարեց «Արծիւ» շքանշանով, Յունիս 8-ին տեղի ունեցած արարողութեան մը ընթացքին:

Հեղինակաւոր «Արծիւ» շքանշանին արժանացան եղբայրներ Արթուր Տէր Զաքարեան, Արիս Տէրտէրեան եւ Դանիէլ Շահկարտեանս: Ցարդ, աշխարհի տարածքին այս շքանշանին արժանացած է սկաուտներու միայն 2 տոկոսը:

Սկաուտապետ Արթո Ղազարեան այս առիթով կազմա-

կերպուած հանդիպումի մը ընթացքին, մեծարեալ եղբայրները հրաւիրեց բեմ: Անոնք խօսեցան շքանշանին արժանացման համար իրենց իրագործած ծրագիրներուն մասին: Ապա տեղի ունեցաւ շքանշաններու յանձնում:

Այս առիթով, երեք սկաուտներուն շնորհաւորագիրներ յղած էին քոնկրէսական էտրմ Շիֆ, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեան, Լոս Անճելըս գաւառի վերահսկիչ Մայք Անթոնովիչ եւ Գայիֆորնիոյ

նահանագային Ծերակոյտի ժամանակաւոր նախագահ Քեւըն Տը Լիոն:

Արարողութեան աւարտին, «Արծիւ» շքանշանով մեծարուած սկաուտներուն ի պատիւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

PINK
*Kimberley*TM
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍԿՈՒՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՄՈՆԹԵՎԻՏԵՆՈՅԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկաուտական Խորհուրդը ՄՈՆԹԵՎԻՏԵՈ

2-4 Մայիս 2014-ին, Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթէվիտէոյի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի սկաուտական ղեկավարներու շրջանային չորրորդ համագումարը, Հ.Մ.Ը.Մ-ի Սկաուտական Շրջանային Խորհուրդի կազմակերպութեամբ: Խորհուրդին մաս կը կազմեն քոյրեր Նենսի Թադէոսեան, Սեսիլիա Տաղլեան, Պէաթրիս Սէֆէրեան եւ Սիլվանա Սաաճեան, եղբայրներ Ֆեռնանտօ Աւագեան եւ Նազարէթ Դանիէլեան, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի սկաուտական Շրջանային Խմբապետ եղբ. Ակուսթին Անալեան:

Ամէն տարի գումարուող այս համագումարին նպատակն է Հարաւային Ամերիկայի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական աշխատանքները համադրել եւ յառաջիկայի ծրագրումները կատարել:

Համագումարին ներկայ եղան շրջանի երեք մասնաճիւղերու (Մոնթէվիտէօ, Գորտոպա եւ Պուէնոս Այրէս) սկաուտական 32 ղեկավարները, մեծ յանձնառութեամբ ու խանդավառ ոգիով, բանավիճելով, կարծիքներ փոխանակելով, ծրագիրներ մշակելով եւ շրջանին հետ կապ ունեցող ընդհանուր հարցերու մասին որոշումներ որդեգրելով:

Համագումարը ունեցաւ կեդրոնական երեք առանցք՝ Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ բանակում, Յունուար 2015-ին տեղի ունենալիք շրջանային բանակում եւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակ (2015 Ապրիլ): Այսպէս, տարուան ընթացքին գործադրուելիք գործունէութեան մեծ մասը մտածուեցաւ, քննարկուեցաւ եւ մշակուեցաւ այս երեք կարեւոր կէտերուն շուրջ:

Համագումարին բացման ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արմատօ Թորգոմեան, Շրջանային Վարչութեան անդամներ եղբայրներ Կուսթաֆօ Խաչատուրեան եւ Յակոբ Յակոբեան, Մոնթէվիտէոյի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Նատիա Ռոտաս, նոյն կազմի անդամ եղբ. Տանիէլ Տէրտէրեան, սկաուտական Շրջանային Խմբապետ եղբ. Ակուսթին Անալե-



եան, Ուրուկուէյի սկաուտական շարժումի ատենապետ Մարքոս Միքէլինի, Ուրուկուէյի սկաուտական շարժումի միջազգային ներկայացուցիչ Սեպասթիան Սանթոս եւ նոյն շարժումի այլ երկու անդամներ:

Առիթէն օգտուելով, երկու կազմակերպութեանց ներկայացուցիչներուն միջեւ տեղի ունեցաւ հանդիպում, որուն ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետը եւ կազմի այլ անդամներ, Սկաուտական Շրջանային Խորհուրդը, Մոնթէվիտէոյի մասնաճիւղի ատենապետուհին, Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի շրջանի սկաուտական երեք խումբերու խմբապետները եւ Ուրուկուէյի սկաուտական շարժումի ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքին արծարծուած նիւթերու կարգին եղան երկրի սկաուտութեան հետ կապ ունեցող հարցեր, ծրագիրներ, ինչպէս նաեւ թէ՛ Արժանթինի եւ թէ՛ Ուրուկուէյի հայ գաղութներու իրավիճակը, առաւել՝ Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութիւնը համայն աշխարհի տարածքին իր հիմնադրութեան օրէն մինչեւ այսօր: Հանդիպման առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչները կազմակերպութեան եւ հայութեան վերաբերեալ նիւթեր յանձնեցին իրենց հիւրերուն:

Համագումարին Ուրուկուէյի սկաուտական շարժումի ներկայացուցիչներուն ներկայութիւնը մեծ դեր ունեցաւ, մասնաւորապէս յաջողցնելով զոյգ կազմակերպութիւններուն միջեւ յարաբերական կապերու ստեղծումը, որուն արդիւնքներէն մէկը եղաւ ժողովէն քանի մը օր ետք Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթէվիտէոյի մասնաճիւղի «Կամբ» սկաուտական խումբին

գրանցումը Ուրուկուէյի ազգային սկաուտութեան մօտ, ինչ որ, անկասկած, պիտի նպաստէ սկաուտական խումբի դաստիարակչական ծրագիրներուն զարգացման, Ուրուկուէյի սկաուտական շարժումին մասնակցութեան եւ փոխադարձ յարաբերութիւններու մշակման:

Սկաուտական շրջանային այս համագումարը վարեց եղբ. Կուսթաֆօ Խաչատուրեան: Նխատրու ընթացքին քննարկուեցաւ սկաուտական խումբերու մէջ գործօն դեր ստանձնելէ ետք կազմակերպութեան ղեկավարութեան մէջ աշխատանքները շարունակելու անհրաժեշտութիւնը:

Առաջին նիստի աւարտին, երեկոյեան, իբրեւ նորութիւն, տեղի ունեցաւ խարուկահանդէս, որուն ընթացքին բացատրութիւններ տրուեցան խարուկահանդէսի մը պատրաստութեան, գործադրութեան, ընթացքին եւ զարգացման մասին: Այս առիթով, Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամները խանդավառ միջնորդութիւն ցուցին, երգելով եւ պարելով աւանդական ու նորաստեղծ երաժշտական կտորներ:

Շաբաթավերջին, Վկայեալ կարգի շքանշան յանձնուեցաւ Պուէնոս Այրէսի մասնաճիւղէն քոյր Մելինէ Մովսէսեանին,






եղբայրներ Արի Սէֆէրեանին, Կարօ Սէֆէրեանին եւ Գորտոպայի մասնաճիւղէն եղբայրներ Ֆապրիսիօ Աճէմեանին եւ Իկնասիօ Անալեանին: Անոնք տարի մը առաջ մասնակցած էին Թորոնթոյի մէջ (Գանատա) տեղի ունեցած դասընթացքներուն, յաջողած էին Վկայեալ կարգի աշխատանիստերու բաժինը եւ Պուէնոս Այրէսի մէջ ներկայացուցած էին զանազան նիւթերու վերաբերեալ հարցարանի մը պատասխանները, որոնց վերահսկումը եւ քննարկումը կատարած էր Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Շրջանային Խորհուրդը եւ յաջող արդիւնքը տուած էր անոնց:

Համագումարին, համացանցի միջոցով՝ սքայլով կապ հաստատուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, Եւրասիոյ շրջանի ատենապետ եղբ. Բագրատ Եսայեանին հետ, որ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Բիւրօյի անդամակցութեան իր թեկնածութիւնը յայտարարեց:

Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի սկաուտական ղեկավարներու Շրջանային չորրորդ համագումարի փակման արարողութենէն ետք, մասնակիցները իրարմէ բաժնուեցան հաստատ գիտնալով, որ տակաւին շատ ընելիք կայ, միասնական ձեւով, եւ միշտ պատրաստ:

Համագումարին, համացանցի միջոցով՝ սքայլով կապ հաստատուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, Եւրասիոյ շրջանի ատենապետ եղբ. Բագրատ Եսայեանին հետ, որ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Բիւրօյի անդամակցութեան իր թեկնածութիւնը յայտարարեց:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

StudioVCKEN 2005 PARS



Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻ 35-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹՄԱՐԶԱԿԱՆ ՕՐԸ

Թղթակից
ԼՈՆՏՈՆ

Կիրակի, 18 Մայիսը յիշատակելի օր մը եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լոնտոնի ընտանիքին համար, որ 35-ամեակի իր տօնակատարութիւններու ծիրէն ներս, մարզական խանդավառ օր մը ունեցաւ «Օսթրիլի» մարզական կեդրոնին մէջ:

Մարզական օրը ընդգրկեց տղոց ու աղջկանց պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ Փուլթպոլ: Մրցումներուն մասնակցեցան մասնաճիւղի այժմու եւ նախկին՝ վեթերան մարզիկ-մարզիկուհիներ, ինչ որ տարբեր «համ ու հոտ» տուաւ մարզական այս հանդիպումին:

Մարզական օրուան առաջին մրցումը իրարու դէմ հանեց մասնաճիւղին աղջկանց վեթերան եւ այժմու պասքեթպոլի խումբերը: Արդիւնքը թէեւ վեթերաններուն ի նպաստ եղաւ (42-9), բայց եւ այնպէս մասնաճիւղին երիտասարդ եւ խոստմնալից քոյրերը ունեցան գոհացուցիչ խաղարկութիւն: Անոնց խումբը հազիւ քանի մը

ամսուան կեանք ունի, բայց անոր կը սպասէ լաւ ապագայ: Մրցումէն ետք, աղջիկները նոյնքան խանդավառութեամբ հետեւեցան մարզական օրուան մնացեալ մրցումներուն: Յատուկ տաղաւարով մը անոնք վաճառեցին տեսակաւոր ուտելիքներ, որոնց հասոյթը տրամադրեցին իրենց խումբին կարիքներուն ապահովման:

Յաջորդ խաղը իրարու դէմ հանեց մասնաճիւղին պասքեթպոլի տղոց խումբերը՝ վեթերաններ եւ ներկայի մարզիկներ: Ի տարբերութիւն աղջկանց խումբին, տղոց խումբը ունի քանի մը տարուան կեանք: Օգոստոս 2013-ին, խումբը մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ-ական 9-րդ մարզախաղերուն, Երեւան: Մարզիչ Լորիս Առաքելեանի տղաքը այս մրցումին ունեցան բաւական համոզիչ խաղարկութիւն եւ 33-16 արդիւնքով պարտութեան մատնեցին վեթերաններու խումբը:

Փինկ-փոնկի մէջ, ճակատումը եղաւ մասնաճիւղի երկար տարիներու ախոյեան Հրաչ Պօղոսեանի եւ կրտսեր մարզիկ Վահէ Ալթունեանի միջեւ: Յաղթանակը եղաւ Ալթունեանի կողքին: Ան 3 խաղ պարտութեան մատնեց մրցակիցը եւ տիրացաւ առաջնութեան:

Մարզական օրուան սպաս-



Լած վերջին մրցումը եղաւ Փոլիթպոլը: Մասնաճիւղին 1980-ական տարիներու վեթերանները մրցեցան ներկայի խումբին դէմ: Երիտասարդները բաւական «տաք» սկսան մրցումը եւ նոյնիսկ 2-0 արդիւնքով յառաջդիմութիւն մը արձանագրեցին, սակայն փորձառութիւնը ունեցաւ իր խօսքը եւ մրցումը աւարտեցաւ 3-2 արդիւնքով՝ ի նպաստ վեթերաններուն:

Մրցումներու կողքին, մարզական օրուան մասնակցեցան ծնողական յանձնախումբի անդամները, որոնք զանազան տաղաւարներով ստեղծեցին հաճելի մթնոլորտ: Կազմակերպիչ մարմինը մտածած էր նաեւ հանդիսականներուն մասին: Անոնց համար եւս նկատի առնուեցան կարգ մը մրցումներ, խաղեր եւ նուէրներ: Միաժամանակ, տեղի ունեցաւ մասնաճիւղին 35 տարիներու անցեալը ներկայացնող հրատարակութիւններու, նկարներու եւ բաժակներու ցուցադրութիւն:

Մարզական օրը իր աւարտին հասաւ փակման եզրափակիչ հանդիսութեամբ, որուն ընթացքին խօսքեր արտասանեցին օրուան հանդիսավար եղբ. Շիրազ Վարդանեան եւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Արմանտ Աբրամեան: Անոնք շնորհակալութիւն յայտնեցին բոլոր մասնակիցներուն եւ կատարեցին ախոյեաններու մետալներու տուչութիւն:

Իր տեսակին մէջ քաջալերական այս ձեռնարկը փայլուն




օր մը աւելցուց մասնաճիւղին պատմութեան մէջ, երբ մասնաճիւղին անցեալի եւ ներկայի անդամներուն պարգեւեց մէկ ընտանիքի պատկանելիութեան զգացողութիւնն ու ապրումը եւ օրուան գլխաւոր ու մեծագոյն յաղթականը հռչակեց բոլորը նոյն երգիքի տակ համախմբող Հ.Մ.Ը.Մ.ը:


ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS



11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ 68-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ԱԹՆԵՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի 68-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցավ Կիրակի, 8 Յունիս 2014-ին, Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբի «Թ. եւ Ռ. Աւետիբեան» սրահին մէջ, ներկայութեամբ Շրջանային Վարչութեան, Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու պատգամաւորներու, Շրջանային Սկսուողական Խորհուրդի պատասխանատուներու, խորհրդակցական ձայնով հրաւիրեալներու եւ հիւրերու: Ներկայ էին Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի, Յունահայոց Ազգային Վարչութեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները եւ «Ազատ Օր»-ի խմբագիրը:

Ողջոյնի ջերմ խօսքերով հրաւիրեալները հանդէս եկան իրենց զօրակցութիւնն ու քաջալերանքը յայտնելով Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն, մանաւանդ շեշտելով հայ երիտասարդ սերունդին մօտ գտնուելու եւ գայն դաստիարակելու առաքելութիւնը:

Ժողովը բացուած յայտարարեց առժամեայ դիւանի նախագահ եղբ. Յակոբ Խաչիկեան: Ատենադպրուհի քոյր Մարի Տանկուրեանի հետ ան կատարեց լիազօրագիրներու ստուգումը: Ապա, ժողովը ընտրեց իր մնայուն դիւանը՝ ատենապետութեամբ եղբայրներ



Նազար Աւագեանի եւ Պաղտիկ Գարապաճաքեանի, ատենադպրութեամբ քոյր Մարի Տանկուրեանի: Ժողովը մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեց Հ.Մ.Ը.Մ.ի մահացած քոյր-եղբայրներուն յիշատակը:

Լիազօրագիրներու ստուգումը կատարելէ ետք հաստատուեցաւ ժողովին օրինաւորութիւնը: Յաջորդեց բանաձեւի, հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու ընտրութիւնը:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Նախ, ամփոփ զեկոյցներով հանդէս եկան Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ եւ Ֆիքսի մասնաճիւղերու վարչութիւններու ատենապետները, ներկայացնելով իրենց միաւորներու թուային պատկերը, մարզական խումբերու գործունէութիւնը եւ ձեռնարկներու կազմակերպումը: Այս բաժինը աւարտեցաւ նիւթական հաշուեկշիռներու փոխանցումով:

Ընթերցուեցան նաեւ Շրջանային Սկսուողական Խորհուրդի եւ ընթացաւարտ Շրջանային Վարչութեան տեղեկագիրները եւ նիւթական հաշուեկշիռները:

Գործունէութեան եւ գործելաձեւի մասին որոշ տեղեկութիւններ տալու համար, նշենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանը կը գործէ երեք մասնաճիւղերով՝ Աթէնք Գոքինիա եւ Սելանիկ: Կը պահուին պասքեթպոլի, լողի, ճատրակի, փոլիպոլի, Փուլթպոլի երէցներու եւ կրտսերներու խումբեր: Սելանիկի մասնաճիւղը ունի նաեւ փինկ-փոնկի բաժին: Կը գործէ նաեւ շարժանիւ (մոթորսայքըլ) վարողներու խումբ մը:

Ընդհանուր աշխատանքներու

ծիրէն ներս, շրջանը կազմակերպած է գաթայի կտրոււմներ, միջ-վարչական ժողովներ եւ յարակից այլ գործեր: Մասնա-ծիւղերը լայն աշխատանք տարած են մարզական մրցումներու կազմակերպումով, արշաւներու եւ ձեռնարկներու իրա-գործումով:

Անցնող երկամեակին, Ապրիլեան ոգեկոչական ձեռնարկ-ներու ծիրէն ներս, կազմակերպուած է հեծելարշաւ մը, որ պսակուած է յաջողութեամբ, տուեալ ֆետերասիոններու եւ քաղաքապետութիւններու հետ գործակցաբար:

Երկրի դիմագրաւած նիւթական տազնապը իր զգալի ազ-դեցութիւնը ունեցած է միութենական աշխատանքին վրայ, արգելք հանդիսանալով որ Շրջանային Վարչութիւնը ներկայ գտնուի Կեդրոնական Վարչութեան կողմէ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ-ական կարգ մը հաւաքներու:



կատարուեցան դասախօսական հանդիպումներ, նաեւ՝ խըմ-բապետներու համար սեմինարներու շարք մը:

Հ.Մ.Ը.Մ բնականոն յարաբերութիւններ ունեցաւ Հ.Հ. դեսպանատան, Ազգային Վարչութեան, կրօնական յարան-ւանութեանց եւ գաղութէն ներս գործող բոլոր միութիւններուն հետ, շրջանային կամ մասնաճիւղային մակարդակի վրայ: Հ.Մ.Ը.Մ ընդառաջեց ձեռնարկներու հրաւերներուն եւ բազմաթիւ առիթներով ներկայ գտնուեցաւ սկաուտական տարազաւոր խումբերով:

ՍԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

Շրջանի նախորդ Ներկայացուցչական ժողովի որոշումով կազմուած էր յանձնախումբ մը, որ անցնող երկու տարիներուն կատարեց Սկաուտ. Խորհուրդի կանոնագրի վերամը-շակման նախնական գործը եւ իր աշխատանքին արդիւնքը յանձնեց վարչութեան, առ ի վերջնական վաւերացում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը երկու ներկայացուցիչով իր մասնակցութիւն կը բերէ Հայոց Ցե-ղասպանութեան 100-ամեակի եւ համահայկական խաղերու կազմակերպման միացեալ յանձնախումբին, որ մօտ ապա-գային պիտի ներկայացնէ իր աշխատանքին ծրագրումը:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

Շրջանը սկաուտական երկու միաւորներ ունի Աթէնքի եւ Գոքինիոյ մէջ՝ մոկլիներու, գայլիկ-արծուիկներու, սկաուտ-արենոյշներու, երէց-խմբապետներու, թմբկահարներու խումբերով եւ խորհուրդներով:

Անցնող երկամեակին կազմակերպուեցան սկաուտական երկու բանակումներ, առաջինը՝ Սալամինայի Քանաքիա շրջանը, երկրորդը՝ Սուսիոյ Սէֆ-ի բանակավայրին մէջ:

2012-ի Օգոստոսին, շրջանը խմբապետով մը իր մասնակ-ցութիւն բերաւ Համա-Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետական Զ-համագումարին, Ծաղկաձորի մէջ, Հայաստան:

Սկաուտական Խորհուրդը, ընդառաջելով ստացուած հրաւերներուն, իր մասնակցութիւն բերաւ ազգային վարժա-րաններու հանդէսներուն, կրօնական եւ եկեղեցիներու ան-ուանակոչութեան տօներուն, Յունաստանի մէջ Հ. Հանրա-պետութեան դեսպանատան գինեալ ութերու տօնակատարու-թեան եւ Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած Ապրիլ-եան ոգեկոչումներուն: Սկաուտներ մասնակցեցան նաեւ տո-ղանցքներու:

Այս տարի, գայլիկական վոհմակները Հ.Կ.Խաչի «Սիրոյ պագար»ին պատրաստեցին եւ վաճառեցին քաղցրեղէններ, վաճառքին հասոյթը տրամադրելով Հ.Կ.Խաչին:

Նշենք, որ երկամեակին ընթացքին մասնաճիւղերէն ներս

ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ժողովը յաջորդաբար քննեց միութեան կազմակերպչա-կան, վարչական, դաստիարակչական, սկաուտական եւ մար-զական բաժինները եւ կատարեց նոր աշխատանքներու ծրագրումներ:

Կազմակերպչական գետնի վրայ, նկատի առնուեցաւ կա-ռոյցի կազմակերպման, հզօրացման եւ ընդլայնման հարցը: Շեշտուեցաւ միութենական շարքերէն ներս դաստիարակու-թեան անհրաժեշտութիւնը:

Պատգամաւորներու ելոյթներուն մէջ առկայ էր տնտե-սական ճգնաժամին առթած մտահոգութիւնը, միաժամանակ սակայն յստակ վճռակամութիւն կ'արտայայտուէր միութե-նական գործը անխափան շարունակելու, համագործակցու-թեամբ եւ գաղութի աշխուժութեան պահպանման մտահո-գութեամբ:

ՆՈՐ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ժողովի աւարտին տեղի ունեցաւ Շրջանային Վարչու-թեան հնգանդամ նոր կազմի ընտրութիւն՝ հետեւեալ քոյր-եղբայրներէ.- Գոհար Ալեանաքեան, Հայկազ Տէօքմէճեան, Յակոբ Եթիմեան, Կարպիս Ճանիկեան, Խաչիկ Մինասեան:

Շրջանային Ներկայացուցչական 68-րդ ժողովը փակուե-ցաւ արդիւնաւէտ նոր երկամեակ մը բոլորելու մաղթանքնե-րով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:


ԵՐՈՒԱՆԴ ՔՈԶԱՐ

**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ**

Քանդակագործ եւ նկարիչ Երուանդ Քոչար ծնած է Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս, 1899-ին: Ան յաճախած է Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը: 1918-ին աւարտած է Կովկասեան ընկերութեան նկարչութեան դպրոցը:

Եղած է նկարչութեան ուսուցիչ հայկական դպրոցներու մէջ: Անհատական ցուցահանդէսներ տալով ան ցուցուցած է իր մտածելակերպը, այն է՝ իրապաշտութիւնը արտայայտել զգացումներու զօրաւոր գոյներով:

Քոչար 1922-ին կը մեկնի արտասահման, կ'այցելէ Պոլիս եւ Վենետիկ, ուր ստեղծած քանի մը դիմաքանդակներուն համար կ'արժանանայ արծաթեայ մետալներու:




1936-ին կը վերադառնայ հայրենիք եւ հաղորդակցութեան մէջ կը մտնէ համալսարհային մշակութային գարգացումներու հետ:

1948-ին, մոմաներկերու իր գիւտին համար, Հայաստանի պողոտաներէն մէկուն կը շնորհուի իր անունը:

1955-ին ան կը կերտէ Ջուարթնոցի Արծիւը, յետոյ՝ Սասունցի Դաւիթի պղնձեայ արձանը: 1984 թուականին Երեւանի մէջ կը հիմնուի Երուանդ Քոչարի տուն-թանգարանը:


- ՄԻՏՔԵՐ ԵՐՈՒԱՆԴ ՔՈԶԱՐԻՆ**
- Աւելի լաւ է շտապել, քան՝ ուշանալ:
 - Մարդ կը ծնի անաւարտ դէմքով ու բնաւորութեամբ, բայց անոր ապրելակերպը կը յղկէ եւ կ'ամբողջացնէ այդ պակասը:
 - Սէրը միակ բանն է, որ կ'ապրի երբ սոված է, կը մեռնի երբ կը կշտանայ:



ԳԻՏԵԻՔ ՈՐ...

Հին Հռոմի մէջ, խնճոյքներու եւ տօնախամբուծիւններու ժամանակ դահլիճները կը զարդարէին թարմ վարդերով, իսկ ամբողջ տօնահանդէսի ժամանակ առաստաղէն վարդեր կը թափէին մասնակիցներուն վրայ:

Նման սովորութիւն կար նաեւ Հայաստանի մէջ:





ՄԵՂՈՒՆԵՐ



Իտենք, որ մեղուները կը պատրաստեն շատ համով եւ սննդարար մեղր, որ անպակաս կ'ըլլայ մեր նախաճաշի սեղաններուն վրայ:

Բայց ի՞նչ գիտենք մեղուներու մասին:

Մեղուներու գլխուն վրայ կը գտնուին բազադրեալ աչքեր, բողկուկները եւ բերան:

Մեղուները իրենց փորին վերջաւորութեան ունին թունաւոր ասեղ մը, գոր կը գործածեն ինքնապաշտպանութեան համար՝ խայթելով թշնամիները: Բայց խայթոցը (ասեղը) ետ չեն կրնար քաշել եւ իրենք ալ կը մահանան:

Մեղրը կը պատրաստեն մեղրագործ մեղուները, որոնք մեծ բազմութեամբ՝ խումբերով կ'ապրին (շատ անգամ 15-20 հազար եւ աւելի):

Մեղուները երեք տեսակ են՝ գործաւոր մեղուներ, արու մեղուներ եւ թագուհի մեղու:

Գործաւոր մեղուները 8-10 հազար կ'ըլլան, իսկ արու մեղուները՝

6-8 հազար: Անոնք կ'ունենան միմիայն հակիթ ածող էգ մը, որ կը կոչուի թագուհի մեղու (մայր մեղու):

Մեղուները իրենց բոյնը կազմելու համար կը փնտռեն մուկ, տաք եւ չոր տեղեր, սնամէջ (պարապ) ծառ մը կամ ժայռի ճեղքը՝ ւաճք մը կամ մարդոց պատրաստած բոյները (փեթակ): Երբ յարմար տեղ մը գտնեն, գործաւոր մեղուները անմիջապէս գործի կը լծուին: Նախ ամէն աղտոտութիւն դուրս կը հանեն եւ կը մաքրեն իրենց բոյնը: Բոլոր ծակերը մեղրամոմի նման հիւթով մը լաւ մը կը ծեփեն, միմիայն ծակ մը ձգելով, մտնելու եւ ելլելու համար: Յետոյ, գործաւորները կը սկսին շինել իրական մեղրամոմէ մաղ կոչուող վեցանկիւն բլիթներու ուղղաձիգ կարգեր, որոնց մէջ կը լեցնեն մեղրը:

Թագուհի մեղուն է որ միայն հակիթ կ'ածէ, ուրկէ կը ծնին բոլոր մեղուները:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Ի՞նչն է, որ բոյրն
անոյշ է,
Ինքը կարմիր,

կոթը փուշ է:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 377-ի հանելուկին պատասխանն էր ձնծաղիկ):




ՎԱՐԴԸ

Վարդը 15 սմ. էն 3 մեթր բարձրութեամբ թուփ մըն է: Ծաղիկները պարզ են կամ բազմաթերթ, բուրակտ եւ բազմագոյն (կարմիր, ճերմակ, վարդագոյն, դեղին, նարնջագոյն, մանուշակագոյն): Վարդենիի որոշ տեսակներ կ'ունենան մինչեւ 10-12 մեթր երկարութեամբ սողացող, մազլցող կամ փաթթուող ընձիւղներ: Ընձիւղները սովորաբար պատուած կ'ըլլան փուշերով:

Վարդենիի ծաղիկէն կը պատրաստեն գինի, հիւթեր, անոյշ եւ այլն: Կը մշակուի վարդի 23 հազար տեսակ: Հայաստան վայրի վարդերու բնօրաններէն է:

Տարբեր Յայեացքով



ՍՈՒՏՈՔՈՒ

4			1		8			9
	5	9				6	7	
	8			9			1	
5			7		3			2
		7				8		
3			6		2			7
	4			2				3
	6	1				9	8	
9			8		5			1

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուեալ իւրաքանչիւր քառակուսի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ձշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

5	2	8	7	3	6	1	9	4
1	6	9	2	5	4	3	8	7
7	3	4	8	9	1	2	5	6
8	1	3	4	2	9	6	7	5
2	9	7	1	6	5	4	3	8
6	4	5	3	8	7	9	2	1
3	5	2	6	1	8	7	4	9
4	8	6	9	7	2	5	1	6
9	7	1	5	4	3	8	6	2

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Էն. Պի. էյ.»ի կազմերէն:
- Դղրղոց - Պանուճապատանք:
- Առաջին շունը՝ անջրպետի մէջ - Լուսաւորութեան միջոց - Չայնանիչ:
- Մարմնի մասերէն - Դանդանաւանդ:
- Սրուակ:
- Իգական օտար անուն - Կատաղի:
- Արարական երկիր - Ընդունարան:
- Հրանիւթ - Զօրաբարէյի որդին - Տառի մը դըրացիները:
- Անյագ ուտող - Ասիական անապատ:
- Բագուկ - Հիմք, պատճառ - Զրային փոխադրամիջոց:
- Հետք - Անօգնական, անպաշտպան:
- Վայրի թռչուն - Խոց - Վերտի օփերաներէն:
- Չայնակից գիրեր - Բեմական ներկայացումի տեսակ - Զօրել:
- Կրկնուած բաղաձայններ - Արեգակնային լոյս - Կրկին:
- Անվերջ՝ գաղթ - Թռչուններու վանդակ:
- Շաղկապ - Շնչարգելութիւն - Որձատ:
- Գերմանահայ կուփամարտուհի՝ Սիլզի:
- Նշմարել - Փոխադարձ դերանուն - Ստացական դերանուն:
- Ժամանակ - Ժխտական մասնիկ - Յուցական ածական:
- Արտայայտումի կերպ - Մանր կարկուտ - Խաղաւարտ, պաղպաղ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Ճատրակի հայրենի կրանտմասթրը:
- Նշանաւոր որկրամուրը - Առաւօտ - Թաղիք:
- Շիրվանզադէի երկերէն՝ «Ունէ՞ր...» - Բազմաթիւ:
- Կանաչադոյն պատուական քար - Այբուբենէն - Նշմարէ՛:
- Ճշմարիտ - Պաստառ - Հարսին քոյրը՝ փեսային նկատմամբ:
- Փայլ, ճառագայթ - Աստուած - Բացայայտել:
- Քայլաչափ - Հանքային համեմ - Հերկ - Տառի մը դրացիները - Նաեւ:
- Մեղմ ալիք - «Եռ. է. էֆ. Ա.»ի նախագահը:
- Չարայուշուժիւն - Ափրիկեան երկիր - Այբուբենէն - Իրլանտայի նախկին անունը:
- Խրախուսել, գօտեպնդել - Ոտք - Յոգնակերտ մասնիկ - Էգ շուն:
- Իսլամ կրօնաւոր - Եկամուտ - Կրկնուած բաղաձայններ - Հունտերով սնանող:
- Դասաժամ - Արարողապետ - Արական օտար անուն - Յամառ չորքոտանի:
- Յաւելում - Անգլիացի նշանաւոր ֆութպոլիստ:
- Օծանելիք - Պատմական Լակոնիոյ մայրաքաղաքը - Տեղափոխուած տառեր - Պաղի:
- Դիրտ կապէ - Մորթէ շինուած պարկ - Խորք - Որակ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																			
2																			
3																			
4																			
5	↓																		
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			

ԹԻՒ 215 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1																				
2		Ե	Ս	Ո	Թ	Ր	Ո	Ի	Լ	Ի										
3		Ս	Ս	Ր	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս										
4																				
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8																				
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
12	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
13	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
14	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
15	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
16	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
17	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
18	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
19	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
20	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

Հ.Մ.Ը.Մ ԳՈՒԷՅԹ

